

Գիտություն

ՀՈՒԼԻՍ-
ՕԳՈՍՏՈՍ
№7-8
(400)
2025 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «Գոտի և ճանապարհ» միջազգային կոնֆերանսը

Ս/թ. հուլիսի 22-ին ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «Լուծումներ համագործակցության միջոցով» խորագրով «Գոտի և ճանապարհ» թանգարանային միջազգային կոնֆերանսը: Միջոցառմանը մասնակցեցին ԱՄՆ-ի, Իտալիայի, Իրանի, Հայաստանի, Չինաստանի, Սերբիայի, Վրաստանի գիտական, մշակութային, դիվանագիտական կառույցների ներկայացուցիչներ:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը: «Այս գիտաժողովը բացառիկ հարթակ է՝ համախմբելու աշխարհի տարբեր երկրների թանգարանային և մշակութային ժառանգության ոլորտի փորձագետներին, քննարկելու այսօրվա լուրջ մարտահրավերները՝ թվայնացումից և հանրային ներգրավումից մինչև կլիմայական փոփոխությունների ազդեցությունը մշակութային արժեքների պահպանման վրա: Սակայն այս մարտահրավերները մեր հնարավորությունների դուռ են բացում մորաբարակ մոտեցումների, փորձի փոխանակման և լայնածավալ համագործակցության շնորհիվ», - ասաց ՀՀ ԳԱԱ փոխնախագահը:

Նա նշեց, որ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության համատեքստում մշակութային կապերն ունեն առանձնահատուկ նշանակություն, և հույս հայտնեց, որ այս գիտաժողովը կնպաստի պրոֆեսիոնալ կապերի ամրապնդմանը, սկիզբ կդնի մեր ժրգրեթի, հետազոտական նախաձեռնություններին, համատեղ ցուցահանդեսների իրականացմանը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության



պահպանության և զարգացման բաժնի պետ Լիլիթ Պողոսյանը նշեց, որ Հայաստանի Հանրապետությունը մշտապես կարևորել է մշակութային ժառանգության պահպանությունը և այս համատեքստում միջազգային համագործակցությունը:

Ելույթներով հանդես եկան ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնի ղեկավար Մոհամմադ Ասադի Մովահեդը, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության տնօրեն Արմեն Հովհաննիսյանը, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն Խաչատուր Մելիքեթյանը, Չինաստանի Հունան նահանգի Մշակութային ժառանգության վարչության հնագիտության բաժնի վարիչի տեղակալ, ավագ գիտաշխատող Չե Չունփինը, Հայ-չինական գործընկերության կենտրոնի նախա-

գահ Արմեն Մխիթարյանը: Նրանք ընդգծեցին գիտական համագործակցության, տեխնոլոգիական մորաբարակությունների կարևորությունը մշակութային կապերի ամրապնդման գործում, թանգարանների՝ որպես մշակութային արժեքների պահպանման, գիտակրթական գործունեության և հանրության հետ երկխոսության կարևոր օջախների դերն ու նշանակությունը:

Միջոցառման ընթացքում ներկայացվեցին երկու տասնյակ զեկուցումներ՝ նվիրված թանգարանային ոլորտում մորաբարակ մոտեցումներին, արհեստական բանականության ստեղծած հնարավորություններին և մարտահրավերներին, թանգարանների դերին գեոտուրիզմի զարգացման գործում, պատմամշակութային հնավայրերի թանգարանացման խնդիրներին, Հայաստան-Չինաստան հարաբերություններին, Մետաքսի ճանապարհի ընթացիկ հնագիտական ուսումնասիրություններին ու համագործակցության հեռանկարներին:

Կոնֆերանսը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտը, ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը, «Հայ-չինական գործընկերության կենտրոն» ՀԿ-ն, Հայաստանի պատմության թանգարանը և «Գոտի և ճանապարհ» մշակութային զարգացման ասոցիացիան:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին



Լույս է տեսել Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական նոր հրատարակության երկրորդ հատորը

ունեցավ երկրորդ հատորը:

Ինչպես գիտենք, խմբերգերը կազմում են Կոմիտասի ստեղծագործական ժառանգության ամենամշակակից բաժինը, և դրանց նվիրվեցին Կոմիտասի երկերի ժողովածուի առաջին հրատարակության չորս՝ երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ հատորները:

Այժմ բոլորովին այլ է հայ երաժշտության համայնապատկերը: Ներկայումս մի կողմից՝ Կոմիտասի խմբերգերն իրենց հաստատուն ու անասան տեղն են գրավել Հայաստանում և արտասահմանում գործող առանց բացառության բոլոր հայկական երգչախմբերի (այդ թվում՝ նաև աշակերտական ու դպրոցական) երկացանկերում, մյուս կողմից՝ կտրուկ աճել է հետաքրքրությունը Կոմիտասի ստեղծագործության հանդեպ:

Այստեղից էլ՝ ներկա հատորի հրատարակման անհրաժեշտությունն ու հրատարակությունը:

Հատորում ներկայացված են այն խմբերգերը, որոնք հրատարակվել են Կոմիտասի կյանքի օրոք՝ 1906-1912 թվականներին: Դրանք թվով 30-ն են:

Ինչպես տեղեկանում ենք «Խմբագրի կողմից» ծավալուն առաջաբանից, հատորում ընդգրկված են «գյուղական ժողովրդական երաժշտությունից սկզբնաղբյուր ունեցող այն խմբերգերը, որոնք Կոմիտասն ինքն է հրատարակել, և դրանց հայտնի ու մոտ հայտնաբերված տարբերակները: Հերթականությունն է՝ «Հայ քնար» (7 խմբերգ), «Հայ գեղջուկ երգեր» Բ (10 խմբերգ), փառիզյան վիմագիր տետրը (7 խմբերգ), պարբերական մանուկ (3 խմբերգ): Փարիզյան տետրում գետեղված «Կալի երգը» հետագայում հեղինակը վերամշակել է, ավելի ստույգ՝ դրա հիման վրա ստեղծել է մեր ընդարձակ խմբերգ, որն անվանել է «Կալերգ և սայլերգեր»: Այս խմբերգը մույնպես համերգներում կատարել է (1912-14)»:

Հատորի հիմնական բաժինը եզրափակում է Հովհաննես Հովհաննիսյանի «Նոր գարուն» բանաստեղծության հիման վրա Կոմիտասի «Գարուն» խմբերգը՝ Կոմիտասի ինքնուրույն ստեղծագործությունը, որն առաջին անգամ հրատարակվել էր 1965 թվականին Երկերի ժողովածուի 2-րդ հատորում:

Գիտական մեծ կարևորություն ունեն Ռոբերտ Աթայանի կազմած ծանոթագրություն-

ները, որոնց համար երաժշտագետն օգտագործել է մի շարք օժանդակ նյութեր՝ Կոմիտասի համերգների հայտագրերը և մույն համերգների մասին ժամանակի հայկական մամուլի տեղեկությունները, Գրականության և արվեստի թանգարանում Սպ. Մելիքյանի ֆոնդում պահվող «Ազգային երգարան» ձեռագիր ժողովածուն, որ կազմել են Էջմիածնի ճեմարանի ուսանողները իննսունական թվականներին, 1911 և 13 թթ. Կ. Պոլսում և Ալեքսանդրիայում Կոմիտասի համերգների առթիվ տպագրված «Ձեռաց տետրակներ», որոնք պարունակում են հայ ժողովրդական երգերի մասին Կոմիտասի հանրամատչելի բացատրականները, համերգներում կատարված երգերի խոսքերը, որանց ժանրային և այլ բնութագրումները, Ն. Թեյմուրազյանի կազմած և Հայաստանի ազգային գրադարանում պահվող «Հայ երաժիշտների և երաժշտագետների ստեղծագործությունները» ժողովածուն, որի մեջ կան Կոմիտասի ձեռագրից արտագրած նրա 21 երգերի պարզ մշակումները, Կոմիտասի և Մ. Աբեղյանի «Հազար ու մի խաղ» երգերանքները, Կոմիտասի «Լուռու գութաներգը Վարդաբլուր գյուղի ոճով» հոդվածը, մի շարք այլ հայ երաժիշտների ձեռագրային ֆոնդեր: Ինչպես Երկերի ժողովածուի 1-ին հատորում, այստեղ ևս պահպանված են Կոմիտասի գրության առանձնահատկությունները՝ բանավիճի նշանները դնելու նրա եղանակը, կարճ և երկար տակադոները, բանաստեղծական տեքստի գրության ձևը և այլն: Պահպանված են նաև կատարման առանձնահատկություններին վերաբերող, ելույթական տեղանքներին զուգահեռ դրված հայերեն մշումները, որոնք հաճախ ոչ թե ելույթականների բառացի թարգմանություններն են, այլ ունեն մոր, լրացուցիչ իմաստ:

Առանձնահատուկ պետք է ընդգծեն Ռոբերտ Աթայանի նվիրյալ սան, երաժշտագետ Ղալիթ Դերոյանի կատարած բարեխիղճ ու մանրակրկիտ աշխատանքը ներկա հատորը հրատարակության պատրաստելու դժվարին գործում:

Օգտվելով առիթից՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ամունից ուզում են իմ երախտագիտությունը հայտնել Գեղնեյլուն (ԱՄՆ) գործող «Լարք» երաժշտական ակադեմիային և նրա ղեկավարին՝ ամերիկահայ ճանաչված երաժիշտ, երաժշտական-հասարա-



կական գործիչ Վաչե Պարսունյանին, ում ֆինանսական աջակցությամբ հրատարակվել են Կոմիտասի երկերի ժողովածուի 12-րդ (2003), 13-րդ (2004) և 14-րդ (2006) հատորները, երկրորդ հրատարակության 1-ին (2024) հատորը, ինչպես նաև Ռ. Աթայանի ընտանիքին, մասնավորապես նրա դուստր Նազելի Աթայանին՝ ցուցաբերած աջակցության համար:

Ի դեպ, Վաչե Պարսունյանը ներգրավվել է նաև հատորի ստեղծագործական աշխատանքներում և իրականացրել խմբերգերի վերնագրերի անգլերեն գեղարվեստական թարգմանությունը, ինչը ևս արժանի է երախտագիտության խոսքերի:

Հ.Գ.

Կոմիտասի երկերի ժողովածուի առաջին հրատարակության 2-րդ հատորը հրատարակվեց 1965 թվականին՝ ճիշտ 60 տարի առաջ՝ 1965-ին լրացավ Կոմիտասի մահվան 30-րդ տարելիցը, իսկ 2025-ին՝ 90-րդ տարելիցը:

Խոսքս ուզում են ավարտել Կոմիտասի մահվան ազդեցության տակ Արշակ Չոպանյանի «Ամառիտ» հանդեսի 1935 թ. N 6-ում տպագրած հետևյալ տողերով, որոնք 90 տարի անց արդիական են նաև այսօր, և որի վկայություններից մեկն էլ այս հատորն է. «Աշխարհ մըն է Կոմիտաս, անոր վրայ շատ բան գրուած է, եւ դեռ շատ աւելին կայ գրուելու: Դեռ երկար աւտեն հայ երաժշտագետը, հայ երգահանը, հայ ազգագրագետը եւ հայ հայրենասէրը պիտի զբաղին այդ բազմերախտ ու դիւթիչ դէմքով»:

ԱճՆԱ ԱՍՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն

Բյուրականի աստղադիտարանը հայտնաբերել է նոր աստղ



Բյուրականի աստղադիտարանի գիտաշխատողները հայտնաբերել են ամենածեր Ֆուլոր տեսակի աստղը: Նրանք ապացուցել են, որ RNO 54 աստղային օբյեկտում գտնվող աստղը շատ ծեր Ֆուլոր է, որի բռնկման տարիքը գերազանցում է 1000 տարին, փոխանցում են աստղադիտարանի տեղեկատվության և հանրային կապերի բաժնից:

Ֆուլոր տիպի աստղերն ամենահայտնի և հազվադեպ հանդիպող երիտասարդ աստղեր են, որոնք ժամանակ առ ժամանակ ցույց են տալիս կտրուկ և երբեմն չափազանց երկարատև պայծառության աճ: Այս օբյեկտներն իրենց անվանումը ստացել են Օրիոնի համաստեղության FU Ori աստղից, որը մոտավորապես իննսուն տարի առաջ պայծառացել է 100 անգամ և պահպանում է

պայծառության այդ մակարդակը առ այսօր: Որոշ տեսական գնահատականներով նրանց պայծառության փուլը կարող է տևել մոտ 1000 տարի:

«Բյուրականի աստղադիտարանում հայտնաբերված RNO 54 Ֆուլորը եզակի օբյեկտ է, քանի որ մինչ այժմ հայտնաբերված ամենածեր Ֆուլորն է: Այս օբյեկտով կարելի է եզրակացնել, թե ինչ տեսք կարող են ունենալ Ֆուլոր տիպի օբյեկտները բռնկումից շատ տարիներ անց, և ինչպես են փոխվում նրանց ակտիվության նշանները: Դա կարևոր է այս օբյեկտների մոդելավորման և վաղ փուլերում աստղային էվոլյուցիայի տեսության զարգացման համար», - ասաց Բյուրականի աստղադիտարանի երիտասարդ աստղային օբյեկտներ բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Տիգրան Մաղաքյանը: «Ֆուլոր» անվանումն առաջարկել է Վիկտոր Դամբարձունյանը 1971 թվականին: Մեր գիտական խումբն այս թեմայով զբաղվում է արդեն մի քանի տասնամյակ և զգալի առաջընթաց է գրանցել այդ օբյեկտների որոնման և ուսումնասիրության գործում», - նշեց Տիգրան Մաղաքյանը:

Ուսումնասիրությունն իրականացվել է Բյուրականի աստղադիտարանի երիտասարդ աստղային օբյեկտներ բաժնի ընդհանուր գիտահետազոտական ուղղության շրջանակներում, ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից տրամադրված «Էքստրեմալ արտաթայթային ակտիվության երիտասարդ աստղային

օբյեկտներ» թեմատիկ դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ: Ինչպես նշեց Տիգրան Մաղաքյանը, ծրագրի ընթացքում հայտնաբերվել են զգալի թվով այլ ժայթքող աստղեր, այդ թվում՝ ֆուլորանման աստղեր: Աշխատանքն իրականացվել է ՌԴ ԳԱ Հատուկ աստղաֆիզիկական աստղադիտարանի և ԱՄՆ Կոլորադոյի համալսարանի գործընկերների մասնակցությամբ: Աշխատանքի արդյունքները տպագրվել են հեղինակավոր աստղագիտական «Astronomy & Astrophysics» ամսագրում:

«Հոդվածի նախնական տպագրության հրապարակումից մի քանի ամիս անց նամակ ստացանք մեր ամերիկացի գործընկերներից, որոնք նույնպես ուշադրություն են դարձրել այս օբյեկտի վրա: Նրանք լիովին համաձայնեցին մեր եզրակացությունների հետ և իրենց աշխատանքում հղում են կատարել մեր հետազոտությանը: Մենք մալ Հարավային Կորեայի գործընկերներից ժայթքող աստղերի ամբողջական կատալոգի կազմման աշխատանքներին մասնակցելու հրավեր ենք ստացել», - ասաց Տիգրան Մաղաքյանը: Այս աշխատանքներին մշտական մասնակցություն են ունեցել Բյուրականի աստղադիտարանի առաջատար գիտաշխատող, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Տիգրան Մովսիսյանը և գիտաշխատող, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Հասմիկ Անդրեսյանը:

factor.am, 8.06.2025

ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնում

ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնում քվանտաքիմիական հաշվարկներով ցույց է տրվել ագետիլենի և ջրածնի, հիդրօքսիլ խմբի ու մետաղի միջև մի քանի տարբեր փոխանակման երևույթների հնարավորությունը:

«Ագետիլենն իր ակտիվության շնորհիվ կիրառվում է բազմաթիվ նյութերի ստացման համար թե՛ գիտության, թե՛ արտադրության մեջ: Չնայած բազմաթիվ հետազոտություններին՝ ագետիլենի ռեակտիվության մեխանիզմները տարբեր փորձարարական պայմաններում այդքան էլ պարզ չեն: Մենք ուսումնասիրել ենք ագետիլենի և նրա դեյտերացված տարբերակների վարքը գերհիմնային միջավայրերում միջուկային մագնիսական ռեզոնանսի (ՄՄՌ) սպեկտրոսկոպիայի միջոցով: Դիտվել է ագետիլենի համար նոր երևույթ՝ ՄՄՌ սպեկտրերում համապատասխան ազդանշանների անհայտացում և միաձուլում», - ասում է գիտական խմբի ղեկավար քիմիական գիտությունների թեկնածու Աստղիկ Շախաբունյանը: Ըստ նրա՝

հաշվարկային մեթոդներով ցույց են տրվել ագետիլենի մի քանի հնարավոր փոխանակման պրոցեսներ ջրածնի կամ դեյտերիումի մասնակցությամբ: «Այս հետազոտությունները թույլ են տալիս պարզաբանել ագետիլենի միացման ռեակցիաների մեխանիզմը: Այն կարող է լույս սփռել գերհիմնային պայմաններում ագետիլենի ռեակտիվության պատճառների վրա», - ասում է Շախաբունյանը: Հետազոտությունը տպագրվել է «Journal of Molecular Liquids» գիտական հանդեսում: Այն ներկայացվել է մալ բանավոր գեկույցի տեսքով միջազգային գիտաժողովում և արժանացել է ուշադրության:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից տրամադրված կին գիտնականների առաջխաղացման 20TWS-1D049 դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Նախագծի խորհրդատուն է Ռուսաստանի Ջեկինսկու անվան օրգանական քիմիայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ, ՌԳԱ ակադեմիկոս Վալենտին Անանիովը:

ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի գիտաշխատողները ստացել են նոր միացություններ, որոնք պարունակում են ֆարմակաֆոր հետերոցիկլեր՝ պիրան, պիրիդին, թիոֆեն և ֆուրան:

«Հայտնի է, որ ֆարմակաֆոր օղակները ցուցաբերում են կենսաբանական լայն սպեկտր: Ուստի, ակնկալվում է, որ այդ հետերոցիկլերի համակցումը կհանգեցնի կենսաբանորեն ակտիվ, նոր, առավել արդյունավետ և ընտրողաբար ազդող համակարգերի: Կենսաբանորեն ակտիվ նոր նյութերի հայտնաբերումը նոր սինթեզված միացությունների շարքում ունի ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական նշանակություն», - նշում է հետազոտության ղեկավար, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Երվանդ Պարոնիկյանը:

Ուսումնասիրությունների հիման վրա սինթեզվել են տետրացիկլիկ համակցված նոր հետերոցիկլիկ համակարգեր: Համակարգային մոդելավորմամբ գնահատվել է սինթեզված նոր միացությունների կենսաբանական սպեկտրը, որի արդյունքում առաջադրվել են մի շարք միացություններ փորձնականորեն կենսաբանական ակտիվության որոշման համար:

Հետազոտություններն անցկացվել են միջգիտակարգային և միջազգային համագործակցությամբ: «Ռեակցիաների մեխանիզմը բացահայտելու նպատակով Ռուսաստանի Կրասնոդար քաղաքի համալսարանի օրգանական քիմիայի ամբիոնի հետ համագործակցության շրջանակում կատարվել են քվանտաքիմիական հետազոտություններ», -



նշում է Երվանդ Պարոնիկյանը:

Արդյունքները ստացվել են «Ազոտ, թթվածին, ծծումբ» պարունակող համակցված պիրիդինների ապարեզում: սինթեզը, փոխարկումները և մոլեկուլային մոդելավորումը» թեմայով հետազոտության շրջանակում: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորված 21T-1D-231 ծածկագրով դրամաշնորհի շրջանակներում:

Հետազոտությունների մեջ ներգրավված են եղել երկու երիտասարդ գիտաշխատողներ՝ Ե.Գ.Ք. Շուշանիկ Դաշյանը և Ե.Գ.Ք. Արփինե Հարությունյանը: Հետազոտությունների գիտական արդյունքները տպագրվել են բարձր ազդեցության գործակից ունեցող հեղինակավոր միջազգային հանդեսներում և զեկուցվել միջազգային գիտաժողովներում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին



Լույս տեսավ «Գիտություն» թերթի 400-րդ համարը

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո ակադեմիական թերթ ունենալու զաղափարը մշտապես եղել է ՀՀ ԳԱԱ նախագահության ուշադրության կենտրոնում: Դրա ջատագովն էր ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Վ. Համբարձումյանը: Նման մի փորձ արվեց դեռևս 1990-91 թվականներին: Սկսեց լույս տեսնել Ակադեմիայի «Միտք» շաբաթաթերթը (գլխավոր խմբագիր՝ Ա. Եղիազարյան), որը, սակայն, կարճ կյանք ունեցավ. մի քանի համարից հետո թերթի հրատարակությունն ընդհատվեց: Երկրորդ վճռորոշ քայլը կատարվեց 1993 թ. փետրվարին. սկիզբ դրվեց ակադեմիական նոր «Նպատակ» պաշտոնաթերթի (գլխավոր խմբագիր՝ Ռ. Ղազանջյան), որը 1996 թ. վերանվանվեց «Գիտություն» ամսաթերթի: 1994-2008 թթ. թերթը խմբագրել է Վ. Մուրադյանը, 2009-2022 թթ.՝ Ա. Տեր-Պարթևյանը, 2023 թվականից գլխավոր խմբագիրն է Վ. Հովակիմյանը:

Ֆինանսական դժվարություններով պայմանավորված՝ թերթը սկզբնական շրջանում լույս էր տեսնում որոշակի ընդհատումներով, իսկ 2000-ական թթ. սկզբներից՝ ակադեմիական գրադարանության կատարած կառուցվածքային փոփոխություններից հետո, թերթի հրատարակության աշխատանքները կանոնակարգվեցին, և այն սկսեց լույս տեսնել հաստատուն պարբերականությամբ:

Ընթերցողին ներկայացվող թերթի այս համարը հոբելյանական է՝ թվով 400-րդը: Մինչ օրս լույս տեսած համարների ծավալը կազմում է շուրջ 800 տպագրական մամուլ, որը 500 էջանոց գրքի վերածելու պարագայում կկազմի շուրջ 25 հատոր: Երեք տասնամյակների ընթացքում

«Գիտություն» թերթի հազարավոր էջերում ամփոփված նյութերը լավագույնս լուսաբանում են ներակադեմիական կյանքը, մեր ինստիտուտների և գիտնականների ձեռքբերումները՝ ստեղծելով նորանկախ հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության յուրօրինակ մի տարբերություն:

Տարիների ընթացքում «Գիտություն» թերթում իրենց հրապարակումներով հանդես են եկել անվանի և երիտասարդ բազմաթիվ գիտնականներ: Վերջին շրջանում թերթում բացվել են նոր խորագրեր՝ «Մտքերի հարթակ», «Երիտասարդ գիտնականի ամբիոն», «Չայն մեծաց», «Ստեղծագործում են մեր գիտնականները», «Հիշարժան դեպքեր և դեմքեր» և այլն: Հատկապես կարևորում ենք «Մտքերի հարթակը», որտեղ մերօրյա ի-

րողությունների, գիտության և կրթության լրջագույն խնդիրների, հայոց ինքնության և պատմական հիշողության, մեր երկրի առջև ծառացած մարտահրավերների մասին իրենց դիտարկումներն են հրապարակում ակադեմիական համակարգի (և ոչ միայն) գիտնականները:

Ամենամայա լինելու պատճառով թերթը բնականաբար զրկված է որոշակի օպերատիվությունից: Հրապարակվող նյութերի քանակի ավելացման պարագայում հավանաբար անհրաժեշտ կլինի մալ ավելացնել թերթի պարբերականությունը կամ համարների ծավալները: Այս հարցին, թերևս, հարկ կլինի անդրադառնալ ներակադեմիական կյանքում սպասվող փոփոխություններից հետո:

Արդի իրողություններից ելնելով՝ խմբագրությունն ակնկալում է ԳԱԱ հալագիտական ինստիտուտների գործուն աշակցությունը հայոց պատմության կեղծարարների ստահող հորինվածքների դեմ ուղղված գիտատեսական և հանրամատչելի հոդվածների պատրաստման գործում:

Ակադեմիական գիտության կարևորագույն ձեռքբերումներն առավել լայնորեն լուսաբանելու և հանրայնացնելու նպատակով ակնկալում ենք մալ ակադեմիական բոլոր կառույցների աշակցությունը՝ խմբագրությանը տրամադրել իրենց գործունեության արդյունքներին և ծրագրերին վերաբերող նյութեր:

«Գիտություն» թերթի խմբագրությունը մշտապես կարևորում է ընթերցողների կարծիքներն ու առաջարկությունները, որոնք, անշուշտ, տեղ կգտնեն մեր թերթի էջերում:

խմբագրություն



Ակադեմիկոս Յու. Սուվարյանի անդրադարձը գիտական և գիտատեխնիկական գործունեության կառավարման համակարգի բարեփոխման հարցերին*

- իբրև մտավոր մշակույթի ոլորտ՝ նպաստել հայրենի երկրի ու նրա ժողովրդի եական մերդրումը մարդկային քաղաքակրթության վերելքի ասպարեզում:

Գիտության պետական կարգավորումն սկսվում է օրենսդրական դաշտի ստեղծումից, գիտության զարգացման հիմնավոր ռազմավարության ընդունումից մակրո և միկրոմակարդակներում, կառավարման կազմակերպական կառուցվածքների կազմավորումից, բյուջետային ֆինանսավորումից և ավարտվում գիտական ու գիտատեխնիկական գործունեության վերահսկողությամբ:

ՀՀ սահմանադրությամբ հիմնարար և կիրառական գիտության զարգացումը պետական քաղաքականության հիմնական նպատակներից է: Գիտատեխնիկական ու նորամուծական գործունեության կանոնակարգման համար ընդունվել են ՀՀ մի շարք օրենքներ:

Իրավական և ռազմավարական փաստաթղթերի մշակման փուլում գիտությունը, տեխնոլոգիաները և նորաստեղծությունը դիտվել են որպես օրգանական ամբողջություն, ինչը, ցավոք, իրականություն չի դարձել, տիրապետել է գիտությունը՝ գիտության և կրթության համար հայեցակարգը: Իսկ տեխնոլոգիաների ստեղծումն ու գործադրումը, նորաստեղծությունը՝ իբրև գիտության շարունակություն, մնացել են տեսլականի կարգավիճակում, գիտության պետական կոմիտեն դարձել է բարձրագույն կրթության և գիտության կոմիտե, որին վերապահված գործառնությունների թվում բացակայում են երկրում տեխնոլոգիական և նորամուծական զարգացման խնդիրները:

Հայաստանում 1991 թ. անկախության հաստատումից հետո ակադեմիական գիտության առումով հարկ էր լուծել առնվազն երկու խնդիր՝

- ամբողջացնել ակադեմիական հետազոտության շրջանակները՝ ներառելով վերը նշված խիստ կենսական գիտական ոլորտները,

- ակադեմիան դարձնել անկախ պետականության կառուցման ու իզդրացման կարևոր դերակատար՝ գիտատեխնոլոգիական նվաճումներով և հիմնավոր խորհրդատվությամբ նպաստելով ոչ միայն գիտակրթական համակարգի զարգացմանը, այլև ակտիվ մասնակցելով հանրային կառավարման, ազգային անվտանգության ապահովման, ներքին ու արտաքին քաղաքականության հիմնախնդիրների գիտական մշակմանը: Դա նշանակում էր բարեփոխել ակադեմիական գիտության կառավարման հայեցակարգը՝ համապատասխանեցնելով անկախ պետության շահերին, մասնավորապես ազատ շուկայական տնտեսության տրամաբանությանը, ներքին ու արտաքին մարտահրավերների հաղթահարմանը՝ պետական կառավարման մարմինների հետ սերտ համագործակցությամբ:

«Լավ է ուշ, քան երբեք» սկզբունքով ներկայումս երկրի առջև ծառացած խնդիրների լուծման բանալին գիտությունն է, և

այդ առումով ակադեմիական գիտության բովանդակային բարեփոխումներն այսօր էլ արդիական են:

Վերը նշված խնդիրներից առաջինի լուծումը համեմատաբար դյուրին է, ունի կազմակերպական բնույթ, որի համար կան գիտական ու կարգային նախադրյալներ:

Ակադեմիական գիտության բովանդակային բարեփոխման նպատակով անհրաժեշտ է՝

- ստանձնել պարտավորություններ պետական համապատասխան գերատեսչությունների հետ մշակելու երկրում գիտության ու տնտեսության զարգացման համակցված ռազմավարություն՝ հաշվի առնելով նաև անվտանգության ապահովման խնդիրները, և դրա հիման վրա ձևակերպել գիտատեխնիկական գործունեության պետական պատվերի նախագիծը և ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը,

- գիտության և տեխնոլոգիաների զարգացման հիմնախնդիրների համակարգման պետական լիազոր մարմնի հետ գերակա մասնակցություն ունենալ պետական պատվերի տեղաբաշխմանը, կատարմանը և նորաստեղծական գործունեությանը,

- էականորեն ակտիվացնել ԳԱԱ գիտական կազմակերպությունների անմիջական մասնակցությունը երկրում կարևորագույն գիտատեխնոլոգիական խնդիրների լուծմանը և նորաստեղծական գործունեությանը՝ համագործակցելով համապատասխան գերատեսչությունների ու կազմակերպությունների հետ,

- ԳԱԱ համակարգում դարձնել սովորական աշխատանքային առօրյա գիտահետազոտական աշխատանքի հետ մեկտեղ և դրա արդյունքներով օժանդակել համապատասխան պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին՝ լուծելու երկրում օրենսդրական դաշտի ձևավորման, միջազգային հարաբերությունների ու քաղաքական հիմնախնդիրների գիտական մշակման, տնտեսական ու սոցիալական ծրագրերի հիմնավորման համար՝ տրամադրելով անհրաժեշտ խորհրդատվություն նախապես սահմանված կարգով,

- հայազիտական հետազոտություններով նպաստել հայ մտավոր և մշակութային մշակույթի պահպանմանը, զարգացմանը ու հանրահռչակմանը, մասնավորապես հայոց լեզվի ու հայ գրականության, հայոց պատմության, հայկական արվեստի բոլոր բնագավառների բազմակողմանի զարգացմանն ու ծավալմանը, այդպիսով՝ հայկական ինքնությունը, մեր պատմության ու մշակույթի՝ օտար ոտնձգություններից պաշտպանությանը:

«Ակադեմիական քաղաք» ծրագիրը, որը ներկայումս հանրահռչակվել է, մեր համոզմամբ, մեծ մասամբ վերաբերում է բարձրագույն կրթությանը, քանի որ այսօր գիտությունն ունի ուրույն խնդիրներ, որոնց մասին արդեն նշվել է: Ծրագրով նախատեսվող բուհերի խոշորացման, բուհական կրթության որակի էական բարձրացման, բուհական գիտության զարգացման խնդիրներն արդիական են և կարող են լուծվել բարձրա-

գույն կրթության բարեփոխումների միջոցով: Արդյունքում կստեղծվեն կրթության ու գիտության ժամանակակից համակարգեր, որոնց միջև կծավալվի ավանդական համագործակցություն, բայց նաև մրցակցություն, ինչը կդառնա երկու ոլորտների զարգացման շարժիչ ուժերից մեկը:

Ակնհայտորեն գիտությունն ու կրթությունն ունեն զարգացման յուրօրինակ խնդիրներ, որոնք ավելի շատ վերաբերում են առանձին ոլորտների, քան ընդհանուր են, ուստի նպատակահարմար է դրանց գործունեության կարգավորման համար ընդունել ոչ թե ընդհանուր, այլ առանձին օրենսդրական ակտեր:

Քանի որ գիտության առաքելությունը ոչ միայն աշխարհաճանաչողությունն է, այլ նաև գիտության ստացած արդյունքներով բարձր տեխնոլոգիական զարգացման և երկրի անվտանգության ապահովումը, ապա հարկ է ստեղծել հանրային կառավարման մարմին՝ գիտության և տեխնոլոգիաների նախարարություն (պետական կոմիտե), որի կարևորագույն գործառնություններից են գիտության ու տեխնոլոգիական առաջընթացի համակարգումը և նորաստեղծությունը:

Գիտական ու գիտատեխնիկական գործունեության արդյունավետության բարձրացման ու սոցիալ-տնտեսական և անվտանգային խնդիրների համակցված լուծման նպատակներով անհրաժեշտ է կարևորել գիտության պետական պատվերի սահմանումը գիտական կազմակերպությունների համար՝ չբացառելով նաև դրամաշնորհային ծրագրերը՝ իբրև ազատ գիտական-ստեղծագործական գործունեության հնարավորություն, գիտաշխատողների և առանձին գիտական ստորաբաժանումների աշխատանքը գնահատել պետական պատվերի կատարման, գիտական արդյունքների, ինչպես նաև հայրենական և միջազգային գիտական հանդեսներում հրապարակումների չափանիշներով: Վերականգնել գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման համակարգը՝ այն նպատակաճանդելով գիտատեխնոլոգիական արդյունքների ստացմանը և նորաստեղծությունների ակադեմիական գիտությունը հարկ է դարձնել հայրենական պետականության իզդրացման կարևոր դերակատար՝ գիտատեխնոլոգիական նվաճումներով և հիմնավոր խորհրդատվությամբ նպաստելով գիտակրթական համակարգի զարգացմանը, հանրային կառավարման, ներքին ու արտաքին քաղաքականության, ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտական մշակմանը:

Միաժամանակ հարկ է մշտապես հիշել, որ հայրենի երկրի գիտատեխնոլոգիական շահերը չի կարելի ստորադասել միջազգային հրապարակումներին:

**Խմբագրության կողմից. որոշ կրճատումներով արտատպվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յու. Սուվարյանի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության կառավարման համակարգի բարեփոխման գերակայությունները» հոդվածից («ՀՀ ԳԱԱ Ձեկույցներ», 2025 թ., N 2):*

Հովհաննես Այվազովսկու կերպարը Կլարա Բաուերի վիպակում

Նույնիսկ Հովհաննես Այվազովսկու կյանքն ու արվեստը երբևէ ուսումնասիրած մասնագետներից քչերն են տեղյակ, որ 19-րդ դարի գերմանուհի գրող Կլարա Բաուերը (Clara Bauer, 1836-1876), որը հաճախ հանդես է եկել Կարլ Դետլեֆ (Carl Detlef) գրական ծածկանվամբ, 1869 թվականին Շտուտգարտում լույս տեսած իր «Մինչև տափաստան» վիպակում (Bis in die Steppe. Novelle von Carl Detlef, Stuttgart, 1869) ներկայացրել է ամբողջովին հորինված, իրականության հետ որևէ աղերս չունեցող մի փոքրիկ տեսարան: Գործողությունը կատարվում է Սանկտ Պետերբուրգում ռուս իշխանուհի Սուվարյանովայի առանձնատանը կազմակերպված պարահանդեսի ժամանակ: Իրար հետ զրույցի բռնված հերոսների՝ ֆրանսիական դեսպանության առաջին քարտու-



Կլարա Բաուեր

ղարի և Գերմանիայից ժամանած հռչակավոր ջութակահարի միջև տեղի է ունենում հետևյալ հետաքրքրաշարժ երկխոսությունը.

«Ո՞վ էր այն տղամարդը, որ քիչ առաջ գլխով արեց Ձեզ: Ի՞նչ գեղեցիկ արտաքին ունի՝ արվեստագետի կատարյալ տիպար»:

«Հենց այդպես էլ կա. նա

նշանավոր նկարիչ Իսակովն է: Ազգությամբ հայ է, ինչի մասին վկայում են նրա զանգուր մազերն ու հունական կիսադեմը: Դուք, անշուշտ, տեսել եք նրա կտավներից մի քանիսը մեծ իշխանի պալատում: Հանգուցյալ կայսրը փոքրիկ տղային գտել է Սինֆերոպոլում՝ ծնողական աղքատիկ տան պատերն ածվածով նկարազարդելիս: Կայսրին դուր է եկել գեղեցիկ ու խելացի տղան, նա վերջինիս անվճար կրթության է տվել, և այսօր հանձին Իսակովի Ռուսաստանն ունի առաջնակարգ գեղանկարիչ: Նրա վրձինը վարպետորեն է փոխանցում Սև ծովին բնորոշ վառ գույների խաղը: Իսկ շագանակագույն երկար վարսերով այն գունատ կինը նրա տիկինն է: Հրաշալի՜ գույգ է: Սակայն չար լեզուներն ասում են, որ իր ահավոր խանդոտությամբ նա պարզապես քրքրում է ամուսնու հո-



Հովհաննես Այվազովսկի

գին: Տիկինն անգլուհի է և որպես այդպիսին, բնականաբար, որոշ տարօրինակություններ ունի: Ես խղճում եմ Իսակովին... Դուք շուտով կնկատեք, որ նա մոտենում և զրուցում է միայն տարեց կանանց հետ, իսկ երիտասարդների կողքով ստիպված անցնում է գլխիկոր՝ հայացքը գետնին հառած...» (էջ 128):

Այս հնարավոր ու բավականին զվարճալի պատմությունը հատկանշական է ոչ միայն այն պատճառով, որ իր ստեղծագործության մեջ Կլարա Բաուերն անդրադարձել է Հովհաննես Այվազովսկու կերպարին, այլև նրանով, որ վերջինիս անվերապահորեն ներկայացրել է որպես հայազգի արվեստագետ: Դա նշանակում է, որ դեռ 19-րդ դարի կեսերին՝ հանճարեղ ծովանկարչի կենդանության օրոք, ոչ մեկի մտքով անցած չի անցել կասկածի տակ առնել այդ անժխտելի փաստը, ինչպես համառորեն ջանում են անել մեր հարևանները՝ թուրք և ադրբեջանցի արվեստաբաններն ու պատմաբանները:

Արարատ ԱՂԱՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից
անդամ



Լրացավ անվանի գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Էվրիկ Գեղամի Աֆրիկյանի ծննդյան 100-ամյակը:

Է. Աֆրիկյանը ծնվել է 1925 թ. մայիսի 14-ին Երևանում՝ բժիշկների ընտանիքում: Դեռևս ուսանողական տարիներից հետաքրքրվել է գիտական աշխատանքներով, որոնց շարքում է «Պենիցիլինը և նրա նշանակությունը բժշկության մեջ» (1947 թ.) մենագրությունը: ԽՍՀՄ ԳԱ միկրոբիոլոգիայի ինստիտուտի ասպիրանտուրայում սովորել է և Ն. Կրասիլնիկովի ղեկավարությամբ աշխատել (1947-1953 թթ.) մեծ ազդեցություն ունեցան նրա հետագա գիտական աշխատանքի վրա: 1951 թ. հաջողությամբ պաշտպանելով թեկնածուական ատենախոսությունը՝ վերադառնում է Երևան և շարունակում գիտական գործունեությունը ՀԽՍՀ ԳԱ միկրոբիոլոգիայի ինստիտուտում:

1970 թ. Է. Աֆրիկյանը պաշտպանում է դոկտորական ատենախոսություն, 1972 թ. նրան շնորհվում է պրոֆեսորի գիտական կոչում: 1974 թ. ընտրվում է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1982 թ.՝ ակադեմիկոս: 2003 թ. արժանանում է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման:

Վաստակաշատ գիտնականը և գիտության հմուտ կապմասկերպիչը

(Ակադեմիկոս Էվրիկ Աֆրիկյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Ակադեմիկոս Աֆրիկյանի գիտական հետազոտությունների բնագավառը նվիրված էր սպորավոր աէրոբ մանրէների կենսաբանական առանձնահատկությունների պարզաբանմանը: Նշված բնագավառի հետազոտությունների արդյունքում է. Աֆրիկյանին հաջողվեց պարզել սպոր առաջացնող աէրոբ մանրէների տարածվածության օրինաչափությունները հողում և նրանց անտազոնիզմի դերը միկրոբիոտների առաջացման գործընթացներում:

Բազմակողմանի են ակադեմիկոս Է. Աֆրիկյանի գիտական հետաքրքրությունները: 1975 թ. նա մախածեռնում և դեկավարում է հետազոտությունների մի նոր բնագավառ՝ սինթետիկ պոլիմերային նյութերի քայքայումը մանրէների կողմից: Նա մշակեց գիտահետազոտական հատուկ նշանակության ծրագիր՝ նվիրված տիեզերական սարքավորումներում օգտագործվող պոլիմերային նյութերի մանրէաբանական հարցերի պարզաբանմանը: Հետազոտությունների արդյունքում հայտնաբերվեցին 1000-ից ավելի տարբեր ցեղերի պատկանող սնկերի, պոլիմերային նյութերը քայքայող խիստ արժեքավոր շտամներ, որոնք ներկայումս պահպանվում են Մանրէների ավանդադրման կենտրոնի հավաքածուում:

1963 թ. Է. Աֆրիկյանը նշանակվում է ՀԽՍՀ ԳԱ միկրոբիոլոգիայի ինստիտուտի տնօրեն, որը ղեկավարեց ավելի քան 38 տարի, իսկ 2000 թ.-ին դարձավ ինստիտուտի պատվավոր տնօրեն: Նրա եռանդուն ջանքերի շնորհիվ Միկրոբիոլոգիայի ինստիտուտը 1972 թ. տեղափոխվեց Աբովյան քաղաքի նոր գիտաարտադրական համալիր՝ դառնալով ԽՍՀՄ-ի ընդհանուր և կիրառական մանրէաբանության խոշոր կենտրոններից մեկը: Ինստիտուտն ակտիվորեն մասնակցել է Հայաստանում մանրէաբանական գործարանների շահագործմանը՝ մասնավորապես բակտերիալ ինսեկտիցիդների, ամինաթթուների և այլ արժեքավոր նյութերի և մթերքների արտադրության զարգացման համար:

թերի և մթերքների արտադրության զարգացման համար:

Աֆրիկյանն իր աշխատակիցների հետ միասին ձեռնամուխ է եղել նաև մի նոր ուղղության՝ միջատասպան մանրէների հայտնաբերման և նրանց կենսաբանական առանձնահատկությունների լայնածավալ և մանրակրկիտ ուսումնասիրությանը: Ստեղծվեց նոր պատրաստուկ (ԲԼՊ) մոծակների դեմ մանրէաբանական պայքարի համար: Հայտնաբերվեցին նաև այլ վնասատու միջատների դեմ պայքարի ակտիվ շտամներ:

1993 թ.-ին Է. Աֆրիկյանը հիմնեց Մանրէների ավանդադրման կենտրոնը, որը գիտաարտադրական նշանակության ոչ հիվանդածին մանրէների կուլտուրաների Ազգային Հավաքածու է: Մանրէների ավանդադրման կենտրոնն ընդգրկվեց Մանրէների Համաշխարհային Հավաքածուի (WFCC) կազմ: Կենտրոնում այժմ պահվում և ուսումնասիրվում են տարբեր խմբերի պատկանող մանրէների շուրջ 12.000 շտամներ: Հավաքածուն կարևոր նշանակություն ունի ոչ միայն հիմնարար հետազոտությունների համար, այլև ունի ռազմավարական նշանակություն և ազգային արժեք է:

Է. Աֆրիկյանը ղեկավարել է ավելի քան տասը միջազգային գիտական ծրագրեր և պայմանագրեր, որոնք նվիրված են եղել մանրէաբանության արդի խնդիրների ուսումնասիրությանը և ֆինանսավորվել են NASA-ի, ԱՄՆ-ի տարբեր կազմակերպությունների, Եվրոպական տիեզերական գործակալության, CRDF-ի, Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի և այլնի կողմից:

Է. Աֆրիկյանը երկար ժամանակ աշխատել է արտասահմանյան առաջատար կենտրոններում՝ մեկ տարուց ավելի Փարիզի Պաստյորի անվան ինստիտուտում, ԱՄՆ-ի և Կանադայի լաբորատորիաներում, շուրջ երեք տարի ճապոնիայում: Մասնակցել է բազմաթիվ միջազգային կոնֆերանսների՝ որպես հրավիրված

մասնագետ: 1993-1998 թթ. ընտրվել է Եվրոհամայնքի ԻՆՏԱՍ Ասոցիացիայի գիտնականների խորհրդի անդամ (Բրյուսել, Բելգիա):

2009 թ. հիմնադրել է Հայաստանի մանրէաբանական ասոցիացիան, որը Մանրէաբանների եվրոպական ֆեդերացիայի (FEMS) լիիրավ անդամ է:

Է. Աֆրիկյանը երկար տարիներ եղել է «Հայաստանի կենսաբանական հանդես» ամսագրի գլխավոր խմբագիրը, մի շարք միջազգային գիտական ամսագրերի խորհրդի անդամ, ղեկավարել է միկրոբիոլոգիա և կենսատեխնոլոգիա մասնագիտությամբ ատենախոսությունների պաշտպանության խորհուրդը, պատրաստել մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառների բարձր որակավորման մասնագետներ:

Է. Աֆրիկյանը հեղինակ է 6 գրքերի և ավելի քան 350 գիտական աշխատանքների, որոնք ընդգրկում են գիտական հետաքրքրությունների լայն շրջանակ՝ միկրոբային անտազոնիզմի և հակաբիոտիկների ուսումնասիրությունից՝ մինչև էնտոմոպաթոգեն բակտերիաներ, վնասակար բակտերիաների դեմ մանրէաբանական պայքար, մանրէների կենսաքայքայիչներ, կենսակատալիզ, ընդհանուր և կիրառական մանրէաբանությանը նվիրված այլ խնդիրներ:

Ակադեմիկոս Աֆրիկյանը երկարամյա գիտակազմակերպչական աշխատանքի համար արժանացել է մի շարք կառավարական պարգևների՝ «Պատվով նշան» շքանշանի, «Ամանիա Շիրակացի» մեդալի, Ս. Կորոյլովի անվան ոսկե մեդալի և այլն:

Գիտության երախտավոր ակադեմիկոս Էվրիկ Գեղամի Աֆրիկյանը բազում տարիների բացառիկ բեղմնավոր գործունեությամբ անջնջելի հետք է թողել հայ գիտության անդաստանում:

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանունը



Մեկնարկեց «Ամառային գիտական դպրոց» ծրագիրը

Ս/թ. հուլիսի 16-ին ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում մեկնարկեց «Ամառային գիտական դպրոց» ծրագիրը, որին մասնակցեցին բարձր դասարանների և ավագ դպրոցի աշակերտներ:

«Ամառային գիտական դպրոցի» շրջանակներում մասնագիտական կողմնորոշման նպատակով աշակերտներն այցելեցին ՀՀ ԳԱԱ մի շարք կազմակերպություններ, որտեղ ծանոթացան գիտական արդյունքներին, լսեցին զեկուցումներ գիտության արդիական ուղղությունների մասին, կատարեցին գիտափորձեր:

Աշակերտները մասնակցեցին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի պեղումներին, այցելեցին ՀՀ ԳԱԱ փիլոսոֆիա և մանրէաբանության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի Հովհաննես Կարապետյանի անվան երկրաբանական թանգարան, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն:

«Ամառային գիտական դպրոց» ծրագիրն իրականացնում են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնը:

CIMPA ամառային գիտական դպրոցը ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտում համախմբել է գիտնականների և ուսանողների տարբեր երկրներից

Ս/թ. հուլիսի 14-ին ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտում մեկնարկեց Հիմնարար և կիրառական մաթեմատիկայի միջազգային կենտրոնի (Centre International de Mathématiques Pures et Appliquées, CIMPA) ամառային գիտական դպրոցը՝ «Էլիպտիկ կորեր և դրանց կիրառությունները» թեմայով: CIMPA գիտական ամառային դպրոցը կազմակերպվել է ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի աջակցությամբ:

Գիտական դպրոցին մասնակցում են ավելի քան երեք տասնյակ գիտնականներ և ուսանողներ ԱՄՆ-ից, Դանիայից, Հայաստանից, Հնդկաստանից, Հունաստանից, Ռուսաստանից, Միացյալ Թագավորությունից, Թուրքիայից, Լիբանանից:

CIMPA ամառային գիտական դպրոցի նպատակն է մաթեմատիկայի ոլորտի արդի և կարևոր թեմաները ներկայացնել զարգացող երկրներում: CIMPA ամառային գիտական դպրոցի կազմակերպիչներից է Փենսիլվանիայի պետական համալսարանի պրոֆեսոր Միհրան Պապիկյանը: «Էլիպտիկ կորերը կարևոր դեր ունեն ծածկագրության մեջ և լայնորեն ուսումնասիրվում են: Էլիպտիկ կորերի կիրառումը լուծվել է Ֆերմայի մեծ թեորեմը, որը բաց է եղել 350 տարի: Ներկայումս այն մաթեմատիկայում լայն կիրառում ունի: Մեր նպատակն է ներկայացնել այս ուղղությունը գիտական դպրոցի շրջանակում, զարգացնել Հայաստանում թվերի տեսությունը, ծածկագրությունը: Այս ուղղությունները կարևոր դեր ունեն կիրառական գիտության մեջ: Այսինքն՝ սա ռազմավարական ուղղություն է, և մենք ցանկանում ենք Հայաստանում ունենալ լավ պատրաստված մասնագետներ», -



ասաց պրոֆեսոր Պապիկյանը:

Նա շեշտեց ամառային գիտական դպրոցի կարևորությունը համագործակցության, նոր կապերի զարգացման տեսանկյունից: «Հայաստանի ուսանողների համար շատ օգտակար կլինի չվել այլ երկրների մաթեմատիկոսների հետ, տեսնել ինչպես են նրանք մտածում, միասին բնմարկել արդի խնդիրներ», - նշեց Միհրան Պապիկյանը:

CIMPA ամառային գիտական դպրոցի աշխատանքները շարունակվեցին մինչև հուլիսի 26-ը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

ՄՏ-ՔԵՐԻ ՀԱՐԹ-ԱԿ



խոշտանգել ու գողացել քո զավակներին... Եվ դու ամեն օր տեսնում ես նրանց, սիրուն, շքեղ... Ու եթե մարդ ես՝ բնական չի՞, որ մղկտում ես ու երազում, որ մի օր հետ ես բերելու զավակներին... Թե՞ Զրանտ Մաթևոսյանի ասած էն անասունն ես, որ հանգիստ արածում է դաշտում, իսկ ձագին երեկ են մորթել...

Բա դրանց՝ էդ հեքիաթասացներին, չասե՞ս ու ո՞նց չասես, որ Սիսն ու Մասիսը մեր արյան մեջ են, հայ ժողովրդի արյան մեջ, որ դա մեր ցավն է, մեր կորուստը, մահ մեր հավերժական երազն ու մեր վրեժը...

նիքի գաղափարով չմիավորվեցինք, սեփական տնամերձից դուրս ոչինչ չտեսանք... Ո՞նց ստացվեց, որ հայ ժողովուրդը դարձավ հեշտ խաբեյու շաղախ և մի քանի տարում հունցվեց օտար բարքերի ու օտար ցանկությունների խաբուսիկ ու դավադիր ջրով, ու մեր հասարակության մեջ հալած ուղեղների գերած գնաց:

Ո՞նց ստացվեց, որտե՞ղ վրիպեցինք, այդքան փխրո՞ւն էինք, այդքան կարճա՞յտ էինք, այդքան ատո՞ւն էինք իրար... Ի՞նչ պատահեց մեզ:

Հակասական մտքերը հանգիստ չեն տալիս. գուցե ինչ-որ տեղ 2018-ին կարելի էր հասկանալ «ախուրյանցի» մի երևույ-

Մնում է մի եզրակացություն. գործ ունենք ինչ-որ աղանդի հետ... Մորթյա աղանդավորներ, որոնք ոչ մի կերպ չեն հասկանում, որ իրենց կուռքն ատում է հային ու Հայաստանը...

Եվ այն փաստը, որ մեր իրականության մեջ մի զանգված կա, որ չի տեսնում, չի լսում, չի մտածում, չի վերլուծում, այլ պարզապես պաշտում է, դա իրականում այսօրվա մեր ազգային ողբերգությունն է, որ հետևանք է անկախությունից հետո գործած անհամար ու անմեղելի սխալների՝ կրթության դերը թերազնափաստելու, հեռուստատեսության ավերիչ գործունեությունը չնկատելու, օտար «արժեքները» գե-

«Նորածն» կրթվելու, հեքիաթասացների և մեր մասին

Մենք զարմանում ենք, հետն էլ գայրանում ենք, թե ինչ է նշանակում «կրթվելը նորածն է», բայց, այնուհանդերձ կա մի բայց, մենք մոռանում ենք, որտեղ ենք ապրում և ում իշխանության օրոք... Այո, դեռևս 2018-ին եկավ մեկը, դարձավ մեր երկրի ղեկավար ու միանգամից էլ սկսեց նորածն «կրթել»... Ո՞նց... մոռացա՞մք, որ առաջին հերթին հայ ժողովուրդը բաժանվեց սև ու սպիտակի ու «վերին թողտվության» մեծ ջանասիրությանը սկսեցին միմյանց հայիոյել, աջ ու ձախ, ծանոթ-անծանոթ... Եվ արդեն յոթ տարի մեր ժողովուրդը հայիոյում է... Հետո հայիոյել սկսեց ինքը՝ երկրի ղեկավարը, հետո իր զուգընկերուհին, հետո իր թիմը, ընդ որում արդեն ամենաբարձր ամբիոններից, անթաքույց, առանց ամոթի: Բա նորածն չի՞. մնան բան ո՞չ երբևէ տեսել էինք, ո՞չ պատկերացնում էինք ամենավատ երազում անգամ... Կամ. արդյո՞ք նորածն չի հարձակվել սեփական եկեղեցու վրա, ամենաիսկական նորույթ, ընդ որում ոչ միայն մեզ համար, այլև աշխարհի:

Եվ այսքանից հետո արդյոք բնական չի՞, որ նրանք զույգով պետք է «դասախոսություններ» կարդան, որ հայիոյանքների պատճառահետևանքային կապը հաստատեն, այսինքն՝ մոռանալ մեր պատմությունն ու ինքնությունը... Մահ, իհարկե, արժանապատվությունը, բայց այս մեկը մենք կարծես արդեն մոռացել ենք:

Իմիջիայլոք, այդ «դասախոսություններ» ընթացքում մի հեքիաթ է պատմվում, իբր մի մարդ երեք երեխա է ունենում՝ Սիսը, Մասիսը և Սևանը, Սիսն ու Մասիսը մեռնում են, բայց էդ մարդն անվերջ հիշում է նրանց ու չի զնահատում Սևանին... Ինչ-պիսի՞ երախտամոռություն...

Ի՞նչ ասես, տգիտություն ասես, դավադրություն ասես, ի՞նչ ասես, որ ծիշտ լինի... Բա չասե՞ս ա՛յ... Իրականում Սիսն ու Մասիսը չեն մեռել, իրականում քո դրկից հարևանը մտել է քո տուն, սպանել քո ծնողներին, բռնաբարել քո կնոջը, քեզ

Բա դրանց՝ էդ հեքիաթասացներին, չասե՞ս ու ո՞նց չասես, որ եթե ձեզ թվում է, որ ծծելու եք հայի արյունն ու փոխարենը ուրիշ բան ներարկեք, չեք կարողանալու, դուք ո՞վ եք, որ կարողանաք հայ ժողովրդի արյունը փոխել... Բա դրանց՝ էդ հեքիաթասացներին, չասե՞ս ու ո՞նց չասես, որ էդ հեքիաթը... Ափսոս շարունակությունը իմ ունի:

Եվ այս ամենը շատ ծիծաղելի կլիներ, եթե այդքան ողբերգական չլիներ:

Ինձ և հաստատ ոչ միայն ինձ, դաստիարակել են որոշակի սկզբունքներով, որ օրինակ սուտ ասելը վատ է, պարսավելի է, որ սուտ ասողն ամեն ինչի ընդունակ է... Ինձ և ոչ միայն ինձ, մանկուց ասել են, որ ամոռը լավ բան է, որ ամամոռ մարդն ամեն ինչի ընդունակ է... Բայց ես երկու հատկանիշը գերադրական աստիճանով մի մարդու մե՞ջ... Դժվար էր պատկերացնել:

Մեզ դեռ դպրոցից ասել են, որ հայրենասիրությունն արժեք է, որ արժանապատվությունն անհատի ու ազգի համար անխախտելի պայման է... Բայց այդ արժեքների իսպառ բացակայությունը մի մարդու մո՞տ... Անհմար էր պատկերացնել:

Մեր տատերն ու պապերը, մեր ծնողներն ու ուսուցիչները մեզ ասել են, որ պատմական հիշողությունը պայման է մարդ մնալու համար, իսկ հայ ժողովրդի համար մահ գոյատևելու հիմնաքար՝ անարդար աշխարհից հատուցում պահանջելու, Եղեռնի զոհերի հիշատակը խնկարելու, հերոսների սխրանքը հիշելու ու հարգելու համար... Բայց այդ ամենի բացահայտ ու ցինիկ ժխտումը մի մարդու կողմից... Անհմար էր պատկերացնել:

Ու այդ անպատկերացելի մարդ արարածը մեր Հայաստան աշխարհի, մեր հայրենիքի տերն է ավելի քան 7 տարի... Իսկ մե՞նք, ո՞վ ենք մենք:

Անկախություն, պատմագրած, հաղթանակ... Ո՞նց պատահեց, որ հաղթողի հոգեբանությամբ չկարողացանք ապրել, հայրե-

թի, որ մահ հավաքական կերպար էր, որ դոշը ծծեծելով պաշտում էր նորահայտ կուռքին, մա դժվար կյանքով էր ապրել, կողքի հարուստին չար աչքով էր նայել, նրա համար հայրենիք, անվանագություն և նման գաղափարները ծառից կախված անհասանելի պտուղներ էին, ու երբ եկավ մեկն ու ասաց՝ ես քեզ մնամ եմ, կողքի հարուստի ունեցվածքը վերցնելու եմ՝ քեզ տամ, սա պաշտեց էդ ասողին... Բայց հետո՞, այդ տեսակին ո՞նց հասկանա, երբ իր տխուր կյանքից չփրկվեց, հարուստը մնաց հարուստ, դեռ մի բան էլ ավելի՝ իշխանական թևը հարստացավ, իսկ ինքը մնաց չոր տաշտակին ու շարունակեց պաշտել: Ո՞նց հասկանաս...

Որ գրագետ հայաստանցին զգված էր անարդար իրականությունից ու հավատաց, հասկանալի էր, երկիրը «թալանում էին», ինքն արդարություն էր երազում, բայց հետո՞, երբ մեր երկիրն ավելի թաղվեց պաշտոնական թալանի մեջ, հետո հայտնվեց պատերազմի ճիրաններում, հետո խայտառակ ու անհասկանալի պարտություն կրեց, հետո հողը դրեց մեր անթիվ ջահել տղաների, հետո Արցախը դադարեց Հայաստան լինելուց, հետո արցախցիների տեղահանում... Չհաշված անքանակ ստերը, իրար հակասող անիմաստ տեսակետները... Բայց այդ «գրագետ» հայաստանցին շարունակեց պաշտել... Ո՞նց հասկանաս...

Պարզապես ուզում ես մամաներին հատ-հատ բռնել, թափ տալ, աչքերի մեջ նայել ու գոռալ՝ լսի ա՛յ... Ոչինչ, որ եռաբլուրը եռապատկվեց, ու մեր լույսի պես տղաների փոխարեն հնդկներն են քաղաքում վխտում, ոչինչ, որ մեր սահմանները բաց են, ու թուրքն ամեն րոպե կարող է մտնել քո տուն, ոչինչ, որ մենք ստորացած ու նվաստացած ենք, որ այլևս արժանապատվություն չունենք, ոչինչ, որ պարզ չի՝ վաղը մեզ հետ ինչ է լինելու...

Պատասխան չունես, պարզապես չես հասկանում ու սկսում ես ենթադրել...

րազնահատելու, մեր արվեստի ու մշակույթի հանդեպ անտարբերության, պատերազմում զոհված հայորդու գերեզմանը չսրբացնելու...

Ամեն դեպքում անչափ տխուր պատմություն է, որովհետև այս զանգվածի կողքին կա մի հատված, որ 2018-ի չարաբաստիկ հեղափոխությունից հետո չի կարողանում անտարբեր ապրել, չի կարողանում չտեսնել այն նետերը, որ ուղղված են ազգի, ազգայինի դեմ, չի կարողանում հանգիստ տանել էժանգոն ու ստոր դավերը, որ արվում են՝ մեր ժողովրդին պառակտելու համար, չի կարողանում չտեսնել անքանակ ստի ճիրաններում խճճված մեր իրականությունը, չի կարողանում չսարսափել դեմքը կորցնող ու խեղաթյուրված հասարակության վարք ու բարքից, չի կարողանում չմղկտալ հատուկ հրահրված պատերազմում զոհված մեր անթիվ զոհերի համար, չի կարողանում չխելագարվել հայրենիքի մի հատվածի կորստի համար, որտեղ անքանակ հայի արյուն էր թափվել, չի կարողանում հանդուրժել սեփական իշխանության հակահայ դիրքորոշումը, չի պատկերացնում թուրքի հետ բարեկամությունը... Եվ, ցավոք, շուրջ յոթ տարի այդ տեսակի համար մղձավանջի վերածված իրականությունը է, որ ասես մի ամբողջ հավիտենություն լինի ու ոչ մի լույս...

Բայց... Այնուհանդերձ կա մի բայց. դեռևս ոչ մեկին չի հաջողվել ու չի էլ հաջողվելու հիմնավոր փոխել հայ ժողովրդի արյունը... Հիմ, շատ հին, պատմության անհիարթ քառուղիներում անչափ հոգնած, անհանգիստ ու հակասական, շատ հաճախ խաբված ու սխալված, մահ բարի ու հավատացող, դավադիր խոսքին ու սրին սովոր ու անչափ դիմացկուն մեր արյունը:

Լիլիթ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

Հակահայկական հրապարակումները ռուսական գիտական ամսագրում

Վերջերս «Գեղարդ» հիմնադրամը դիմում-բողոք է ներկայացրել Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի նախագահություն, Բարձրագույն ատեստավորման հանձնաժողովի (ԲԱԿ) պատմության փորձագիտական խորհուրդ, «Web of Science» վարչակազմ՝ «Вопросы истории» ամսագրի կողմից ակադեմիական և գիտատեխնիկական չափորոշիչների խախտումների կապակցությամբ:

Խորհրդային տարիներից ի վեր հրատարակվող և Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի ամենահեղինակավոր հրատարակությունների շարքում ընդգրկված «Вопросы истории» ամսագիրը պատմական գիտության ոլորտի ամենահին ակադեմիական ամսագիրն է: Այն ինդեքսավորված է միջազգային տվյալների բազաներում, այդ թվում՝ «Web of Science»-ում:

Վերջին տարիներին ամսագրի խմբագրական քաղաքականությունը միտված է այնպիսի նյութերի հրապարակմանը, որոնք արտահայտում են աղբյուրական պատմագրության շահերն ու



գաղափարախոսական դիրքորոշումները: Ամսագիրը պարբերաբար հրապարակում է աղբյուրների հեղինակների նյութեր, որոնք ունեն հակահայկական և գիտական կեղծ բովանդակություն: Ամսագրի գլխավոր խմբագիրն է ազգությամբ աղբյուրներիցի Պյոտր Սիմոնովը:

Ամսագրի հրապարակումները, որպես կանոն, հիմնված չեն հավասարակշռված աղբյուրների վերլուծության վրա, ամտեսում են միջազգային պատմագրության ավանդույթներն ու գիտական դիսկուրսի փոխարեն վերարտադրում են աղբյուրական պաշտոնական քաղաքականության գաղափարախոսությունը...

Այս նամակով Ռուսաստանի մեր գործընկերների և գիտության ոլորտի պատասխանատուների ուշադրություն ենք հրավիրում «Вопросы истории» «գիտական» ներկայացող հանդեսի հրապարակումների վրա: Կոչ ենք անում՝

1. Անցկացնել «Вопросы истории» ամսագրի խմբագրական քաղաքականության ակադեմիական ստուգում՝ գիտական ամբողջականության համակարգված խախտումների համար:

2. Կասեցնել կամ վերանայել դրա ինդեքսավորումը միջազգային տվյալների բազաներում, այդ թվում՝ «Web of Science»-ում և «RINTS»-ում:

3. Առաջարկել ամսագիրը հանել VAK ցուցակից մինչև խախտումների վերացումը:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ,
18. 06.2025

Ակադեմիական նոր հրատարակություններ

1. Կոմիտաս – երկերի ժողովածու, հ.2:
2. Հեղ.խումբ – Հայկական բարենորոգումների և Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Ազգերի լիգայի ընդունած փաստաթղթերի ժողովածու:
3. «Անուշավան Զաքարյան. կենսամատենագիտություն»:
4. Հ. Սահակյան – Ջուլգաղթյուր. հայրենի գյուղիս պատմությունը:
5. Հովհաննիսյան – Գեղարվեստական ձևերի բովանդակությունը. Պատմատեսական զննումներ, էսսեներ, չափածո խոսքեր:
6. Կ. Չալիկյան – Ջուր և քար. Անձրևաբերության հիմնական ավանդական երգեր:
7. «Բանբեր հայագիտության», 2025 թ., N 1:
8. «Լրաբեր հասարակական գիտությունների», 2025 թ., N 1:
9. «Պատմաբանասիրական հանդես», 2025 թ., N 2:



Ցանկացած բարդ համակարգ ունի իր ներքին ժամանակը և պարպառի չէ, որ այն անցյալը կապի ապագայի հետ ներկայով...

Ընթերցողին ենք ներկայացնում ԳԱԱ ինֆորմատիկայի ակտոմատացման պրոբլեմների ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Աշոտ Գևորգյանի և ԳԱԱ գիտության հանրամատչելիացման և զարգացման ծրագրերի վարչության առաջատար մասնագետ Արթուր Ղարազյոզյանի հարցազրույցը:

- Պարոն Գևորգյան, Դուք տեսական և մաթեմատիկական ֆիզիկայի մասնագետ եք, ով զբաղվում է դասական և քվանտային ֆիզիկայի հիմնահարցերով: Վերջերս Թուրինում կայացավ միջազգային խոշոր գիտաժողով, որին մասնակցեցիք նաև Դուք և հանդես եկաք զեկուցումով: Ներկայացրեք, խնդրենք, այդ գիտաժողովի բնույթը, նպատակները, արդյունքները...

- Գիտաժողովը բավական ներկայացուցչական էր. ավելի քան 300 միայն բանավոր զեկուցումներ քվանտային ֆիզիկայի հիմնահարցերի և կիրառությունների վերաբերյալ: Առանձնակի մեծ էր հետաքրքրությունը այնպիսի ոլորտների հանդեպ, ինչպիսիք են քվանտային ինֆորմատիկան և քվանտային կոմունիկացիաները, քվանտային հաշվարկներն ու քվանտային մետրոլոգիան, որոնք մոտակա ժամանակներում էապես կփոխեն մարդկային քաղաքակրթության հնարավորություններն ու իմաստները: Այսօր մենք գտնվում ենք երկրորդ քվանտային հեղափոխության դարաշրջանում, որի ազդեցությունը մարդկային քաղաքակրթության վրա, շատ գիտնականների կարծիքով, ավելի մեծ է լինելու, քան մաթյորիկը. քվանտային համակարգիչների ստեղծում, քվանտային ինֆորմատիկա, քվանտային կապուլիների զարգացում և այլն... Այս ամենը կհանգեցնի տեխնոլոգիական անմախաղեպ զարգացման մարդկային գործունեության բոլոր ոլորտներում, առանց բացառության: Ասեմ նաև, որ ոչ քյուբիթային, ավելի բարդ տրամաբանությանը գործող քվանտային «համակարգիչ» կա իմ համոզմամբ նաև բնության մեջ և դա, այսպես կոչված, «դատարկ տարածությունն է»...

-Որքան հասկանում եմ, այժմ աշխատանքներ են ընթանում այդ քվանտային գերհամակարգչի ստեղծման ուղղությամբ:

- Քվանտային համակարգիչներ, որպես այդպիսի, արդեն իսկ կան, սակայն որպեսզի դրանք լիարժեք կյանք մտնեն, դեռևս կան մի շարք տեխնիկական բարդ խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն: Կոնֆերանսի ժամանակ լսեցի տարբեր ելույթներ ու զեկույցներ, որոնք ինձ հանգեցրին այն համոզման, որ քվանտային տեխնոլոգիաների զարգացումները բերելու են երկրների մոր բևեռացման, և հետ մնացողները դուրս կվնան ապագայից. բառիս բուն իմաստով: Առաջատար երկրների կողմից հսկայական միջոցներ են ներդրվում այս ոլորտում, որոնք, իհարկե, անհամեմատելի են մեզ մոտ կատարվող ծախսերի հետ: Քվանտային կապուլիները հասել են այն աստիճանի գրագուցման, որ յոթ հազար կիլոմետր հեռավորության վրա տեղեկատվություն են փոխանցում, որն անհնար է, որ օգտագործվի կամ տնօրինվի երրորդ օգտատերի կողմից: Քվանտային ֆիզիկայի առանձնահատկություններին ինչ մեկն էլ հենց այն է, որ գաղտնագրությունն այստեղ անհաղթահարելի է ի սկզբանե: Վերջերս հայտարարվեց, որ ստեղծվել են առաջին քվանտային ռադարների նախատիպեր, որոնց համար այլևս չկան անտեսանելի թռչող սարքեր:

-Խնդրում եմ վերադառնաք կոնֆերանսին Ձեր ներկայացրած զեկուցմանը:

- Թուրինի կոնֆերանսին ես ներկայացրել էի մի զեկույց, որը նվիրված էր փոփոխական էնտրոպիայով օժտված ֆիզիկական օբյեկտներից առանց փոխադրելու տեղեկատվություն ստանալու հարցերին: Ձեկուցման մեջ շոշափած խնդիրներն առավելապես վերաբերում էին, ինչպես նշվեց, ապագան կամխորոշող քվանտային երրորդ հեղափոխությանը: Խոսքը վերաբերում է *տարածաժամանակային ճարտարագիտություն* (ՏԺԳ), որն էապես կփոխի բնությանն առնչվող մեր պատկերացումներն ու հնարավորությունները: Նշեմ, որ ՏԺԳ-ի մասին սկսեցին խոսել, երբ էյնշտեյնի կողմից զարգացվեց հարաբերականության ընդհանուր տեսությունը, ինչը, սակայն, արագ մարեց ամիրագործելի գաղափար լինելու հիմնավորմամբ:

Այս խնդրի շուրջ ինձ մոտ համալսարանական տարիներից հարցեր էին առաջանում, որոնց պատասխանները գտնելու ուղղությամբ ես աշխատել եմ տասնամյակներ շարունակ: Իմ դկտորական ատենախոսության հիմնական խնդիրներից է եղել քվանտային ֆիզիկայում դիտվող որոշ խնդիրների ուսումնասիրությունը, որը չի հաջողվել նկարագրել ընդունված ու արդեն դասական դարձած քվանտային պատկերացումների շրջանակում: Ձանգվածող մասնիկներ և դաշտեր չպարունակող «դատարկ տարածությունը», կամ որ մույնն է՝ վակուումը, այդ իմաստով կարևոր գործառնություն ենցող միջավայր է քվանտային ֆիզիկայի համար, որը միշտ գտնվել է իմ հետաքրքրությունների և ուսումնասիրությունների կիզակետում: Ես դեռևս շատ երիտասարդ էի, երբ հասկացա, որ քվանտային ֆիզիկայի հիմնարար, տվյալ դեպքում Յանգ-Միլսի հավասարումներն անհրաժեշտ է ընդհանրացնել՝ ներառելով քվանտային վակուումի պատահական վարքը: Այդ խնդիրն ինձ հաջողվեց մաթեմատիկորեն իրականացնել միայն երկար տարիներ հետո: Մասնավորապես 2019 թ. կարողացա ցույց տալ, որ էլեկտրաթույլ փոխազդեցություններ նկարագրող SU(2)×U(1) տրամաչափային խմբի համաչափության շրջանակներում, վիճակագրական հավասարակշռության սահմաններում առաջանում է լուծում, որը մեկ սպինով (սպինը տարրական մաս-

նիկներին բնորոշ քվանտային մեծություն է) անգանգված Բոզե մասնիկ է (Բոզե Նոբելյան մրցանակի դափնեկիր հնդկ ֆիզիկոս է), ինչը ես անվանեցի ՅԱՅՈՆ:

- Բնորոշե՞ք կամ ավելի ծիշտ՝ նկարագրե՞ք խնդրեն «ՅԱՅՈՆ»...

- «ՅԱՅՈՆԸ», ինչպես նշեցի, անգանգված, չլիցքավորված մեկ սպինով քվանտացված (երեք քվանտային քվերով նկարագրվող) մասնիկ է: Ցույց է տրված, որ էներգետիկորեն շահեկան է, և բնականաբար հավանականությունը մեծ է, որ հակադիր սպիններով Յայոնները քվանտային խճման արդյունքում առաջացնեն զրո սպինով Բոզե մասնիկներ, որոնք այնուհետև, ենթարկվելով Բոզե կոնդենսացիայի, ստեղծեն սկալյար դաշտ: Իմ պատկերացմամբ սկալյար դաշտը առաջնային է, և դա է ստեղծում ֆիզիկական տարածություն առանց ժամանակի: Գլոբալ ժամանակը

սկիզբ է առել Տիեզերքի առաջացմանը զուգընթաց՝ Մեծ պայթյունի հետևանքով, որը տեղի է ունեցել իմ կարծիքով արդեն գոյություն ունեցող տարածության մեջ: Այլ խոսքով, Տիեզերքն ընկղմված է հայոններով կազմված տարածության մեջ, որի հյուսվածքները կարող են լինել տեսանելի և «չափելի», հատկապես զանգվածող մարմինների մոտակա տարածություններում, լույսի տարածման օրինաչափությունների ուսումնասիրության փորձերում՝ որպես տարածության կորացման կամ անհամասեռությունների հետևանք: Ինչպես ցույց են տալիս տիեզերք արձակած ՆԱՍԱ-ի և Եվրոպական տիեզերական գործակալության արբանյակների իրականացրած չափումները, տիեզերքի ամբողջ բծերգիայի 0,4%-ը ներառում են աստղերը, մոլորակները, գալակտիկաները, 3,6%-ը կապված է միջգալակտիկական փոշու ամպերի հետ, 22%-ը այսպես կոչված մութ մատերիան է, որի մասին մեզ քիչ բան է հայտնի, և մնացած 74%-ը այսպես կոչված մութ էներգիան է, որը մույն Սկալյար դաշտն է: Հին ժամանակներում մատերիայի այդ ձևը հայերն անվանել են Արփի, իսկ հույները՝ Եթեր: Դեռևս հնում քրմական դասը եթերի մասին ունեցել է որոշակի պատկերացում ու գիտելիք, որոնք օգտագործվել են մարդկայն բժշկման, ինչպես նաև պայծառատեսության և այլ ոլորտներում: Չնայած նշված երևույթների իրական լինելու հստակ փաստագրված ու ապացուցված դեպքերին, ինչպես օրինակ՝ հնդկ մաթեմատիկոս և պայծառատես Սրինվաթա Ռամանուջանի դեպքում, ով կարողանում էր բարդագույն մաթեմատիկական խնդիրների լուծումները գրել առանց ապացուցման, միանգամից: Երբ նրան հարցնում էին, թե ինչպես է դա հաջողվում անել, Ռամանուջանը պատասխանում էր, որ ինքը խնդրանքով դիմում է Բուդդային, որը և տալիս է խնդրի լուծումը: Այլ խոսքերով սա հուշում է, որ տիեզերքում կա շտեմարան, որտեղ պարփակված են տարատեսակ գիտելիքներ...

Բանն այն է, որ մենք գիտականորեն ցույց ենք տվել, որ սկալյար դաշտը՝ մութ էներգիան, կամ որ մույնն է՝ արփի-եթերը, ըստ էության, բարդ տրամաբանությամբ քվանտային համակարգիչ է: Այն ունի աներևակայելի մեծ հիշողություն, որը կարող է պարունակել բնությանն առնչվող հնարավոր տարաբնույթ տեղեկատվություններ ծրագրերի տեսքով, որոնք հնարավոր չէ ջնջել արտաքին միջամտությամբ, քանի որ սկալյար դաշտը անգանգված, անլիցք ու անսպին է: Եթե նաև հաշվի առնենք, որ այդ բնական համակարգիչն օժտված է անհավանական մեծ էներգիայով, ապա կարող ենք պնդել, որ դա հենց իրական ՈՒՐՄԻՉԸ է: Տեսանելի տիեզերքը ընդամենը նրա մեջ ընկղմված անհամեմատ փոքր էներգիայով օժտված նյութական կառուցվածքների բազմություն է:

- Ըստ Ձեզ, հնարավոր չէ գնալ անցյալ, տեսնել, թե իրականում ինչ է կատարվել, նաև՝ ապագա՝ տեսնելու, թե ինչ է կատարվելու...

- Այո, միանշանակ: Ես պնդում եմ, որ անցյալը, ներկան և ապագան տիեզերական պահոցներում գետնոված ծրագրերի տեսքով գոյություն ունեն միաժամանակ, և, այո, կամ մարդիկ, որոնք իրենց գիտակցությամբ ի գորու են մտնելու այդ պահոցները և ստանալու տարբեր տեսակի տեղեկություններ և գիտելիքներ, ընդ որում նաև տեղեկատվություն անցյալից և ապագայից: Պարզապես պետք է նկատի ունենալ, որ եթե անցյալը՝ որպես կատարված փաստ, օժտված է միակությանը, ապա ապագան կարող է ունենալ բազմաթիվ իրականացումներ: Ամենաեական հանգամանքն այն է, որ մեր խոմքը փորձարարական եղանակով ցույց է տվել, որ տարածությունը իսկապես լցված է անգանգված մեկ սպինով օժտված Յայոններով: Այդ աշխատանքները զեկուցվել են քվանտային ֆիզիկայի և կոսմոլոգիայի հարցերին նվիրված մի շարք խոշոր միջազգային գիտական կոնֆերանսներում: Մենք, իհարկե, միամիտ չենք և չենք ակնկալում, որ մեր հետազոտություններն արագ ճանաչման կարճաճանա, բայց վստահորեն առաջ ենք ընթանում՝ կատարելով մեր հետազոտություններ, բացառաբախելով մորմունք երևույթներ:

- Խնդրեմ, հանրամատչելի ներկայացրեք փորձերը, որով համոզել եք Յայոնի գոյության գաղափարին:

- Փորձն իրականում շատ պարզ է. մենք մեր առջև խնդիր էինք դրել հետազոտել, թե արդյոք տարածականորեն իրարից անջատված լույսի երկու փնջերը միմյանց վրա փոխազդո՞ւմ են, թե՞ ոչ: Նշենք, որ Մաքսվելի դասական էլեկտրադինամիկան դա արգելում է, իսկ քվանտային էլեկտրադինամիկան չնայած տեսականորեն այդպիսի ազդեցությունը հնարավոր է համարում, այնուհանդերձ, ինչպես ցույց են տալիս մաթեմատիկական հաշվարկները, փորձնականորեն այդպիսի չափումներն անիրագործելի են դիտարկվող երևույթների անչափելի փոքր մեծությունների պատճառով, հատկապես երբ խոսքը լույսի տեսանելի տիրույթի աղբյուրների մասին է: Մենք ուսումնասիրել ենք ձեղքի վրա լույսի դիֆրակցիայի հանրահայտ փորձը՝ ձեղքի հետևում ավելացնելով լույսի համար տեղադրված անթափանց գլան, վրան փաթաթված երկար լուսատուր, որտեղ կարող է տարածվել այլ աղբյուրից ծառագող լույսի փունջը: Իրականացված չափումները, որոնք կատարվել են ժամանակակից էլեկտրոնային տվիչներով, ցույց են տալիս, որ դիֆրակցիոն պատկերներում տեղի են ունենում լույսի ինտենսիվության տարածական զգալի վերախմբավորումներ, ինչպես միկրոսկոպիկ (միկրոն), այնպես էլ մակրոսկոպիկ (միլիմետր) մասշտաբներում: Փորձի վերլուծությունը վկայում է, որ երևույթը հնարավոր է՝ կայանա, եթե «դատարկ» տարածությունը լցված լինի անգանգված մեկ սպինով մասնիկներով՝ Յայոններով... Ուրիշ բացատրություն պարզապես չկա... Ինչը նշանակում է, որ տեղի է ունենում տարածության հիմնարար հատկութե-

յունների, տվյալ դեպքում բեկման ցուցիչների փոփոխություն, որը կարող է ազդել տարածությունում ընթացող բոլոր տիպի բնական ընթացքների վրա:

Դարկ է նորից ընդգծել, որ քվանտային երկրորդ հեղափոխությունը կապված է լինելու տարածաժամանակային ճարտարագիտության հետ, ինչը մենք արդեն իրականացնում ենք Յաստառում: Երբ մեզ հաջողվի տարածական համեմատաբար մեծ մասշտաբների վրա զգալիորեն փոխել բեկման ցուցիչների արժեքները, դա կարող է հանգեցնել էական փոփոխությունների բնության մեջ տեղի ունեցող բոլոր ֆիզիկա-քիմիական-կենսաբանական երևույթներում... Այլ խոսքով, երբ մենք որոշակի տիրույթներում փոփոխում ենք տարածաժամանակը, այդ տիրույթներում տեղի է ունենում բոլոր հիմնարար օրենքների ու օրինաչափությունների փոփոխություն:

- Իսկ դա չի՞ հանգեցնի աղետների:

- Մենք դեռ շատ հեռու ենք այդպիսի հեռանկարից, թեպետ դրա շուրջ անշուշտ մտածում ենք: Նշված ճանապարհով մենք ապագայում կարող ենք ստեղծել էներգետիկ ոչ վառելիքային աղբյուրներ, մոր տիպի սարքեր, որոնք թույլ կտան փոփոխական էնտրոպիա ունեցող առարկաներից տեղեկատվություն ստանալ առանց ուղիղ միջամտության... Կարող ենք կառուցել չեզոք զանգվածներն արագացնող և տարածության մեջ ճախրում (լեվիտացիա) ապահովող սկզբունքային մոր տիպի անվառելիք սարքեր, որոնք հնարավոր է փոխազդեն «դատարկ տարածության» իյուսվածքների հետ... Ես կարող եմ քվարկումը շարունակել, և դա ֆանտաստիկա չէ: Նշված սարքերի որոշ նմուշներ արդեն իսկ ստեղծված են:

- Իսկ ժամանակի առումով ի՞նչ կասեք:

- Այսօր տարածված է այն տեսակետը, ըստ որի՝ տիեզերքն առաջացել է մեծ պայթյունից մոտ 13.8 միլիարդ տարի առաջ: Մինչև պայթյունը ամբողջ մատերիան գտնվել է չափազանց փոքր ծավալում, որտեղ զանգվածի խտությունը կազմել է 10⁹⁶ գ/սմ³, ինչն անպատկերացելի ու անբացատրելի է: Ինձ մոտ տրամաբանական հարցեր են առաջանում: Պայթյունը շարժման աղետալի (էքստրեմալ) ընթացք է, և այն կարող էր տեղի ունենալ միայն տարածության մեջ: Եթե չլիներ ապագա տիեզերք պայմանավորող տարածությունը, այդ սիմպլյար կետը չէր ընդարձակվի պայթյունի ձևով: Այսպիսով, առանց տարածության ոչ մի շարժում լինել չի կարող: Այսինքն, ի սկզբանե եղել է անհաշվելի չափողականության տարածություն, բայց չի եղել գլոբալ կամ մեկ ընդհանուր ժամանակ: Տարածությունը, որն օժտված է մեծ էներգիայով, կարող է ներքին անհամասեռությունների և լարումների պատճառով պայթել և առաջացնել մարմիններ, որոնք օժտված են մատերիայի մի ձևով, որը մենք անվանում ենք զանգված: Պայթյունից հետո առաջանում են զանգվածեղ մարմիններ, որոնք իրար նկատմամբ շարժվում են, որը և բնութագրվում է մոր չափմամբ, ինչը մենք կոչում ենք գլոբալ ժամանակ: Բայց դրանով ժամանակի առեղծվածը չի սպառվում: Ինչպես մեզ վերջերս հաջողվեց ցույց տալ, երբեք և ավելի կետային մասնիկներից բաղկացած համակարգերը բարդ համակարգեր են, որոնցում ժամանակն ընթանում է ոչ պարզունակ ձևով: Այն կարող է լինել անհամասեռ, տեղ-տեղ մուկնիսկ պատահական և ունենա զարգացման պայք: Վերջինս շատ կարևոր է դասական և քվանտային դինամիկ համակարգերի միջև սահուն անցում ապահովելու, ինչպես և ընդհանրապես բնության մեջ տեղի ունեցող երևույթներն առավել խորը հասկանալու և նկարագրելու համար:

-Արդյոք պաշտպանվա՞ծ են գիտական մտքի արգասիքները, որանց կիրառականությունը օտար ինտերվենցիաներից, օտարների մոտ հայտնվելուց:

- Ցավոք, ոչ: ԽՍՀՄ-ի քանդվելուց հետո ԳՂ-ը չկարողացավ որևէ խելամիտ համակարգ ստեղծել՝ սեփական գիտությունը զարգացնելու և, առավել ևս, նրա արդյունքները գնահատելու, սեփական կարիքների համար օգտագործելու և պաշտպանելու համար: Հիմա ավելի ժամանակակից է դարձել չնկատել սեփական գիտության նվաճումները և ապավինել դրսի խորհուրդներին: Դրա վառ ապացույցն է Երևանի գիտատեխնիկական հզոր գրադարանի լուծարումը հայկական մեծաքանակ արտոնագրերով հանդերձ և նրա, ըստ էության, ոչնչացումը: Որ վերաբերական մարմինն է խորհուրդ տվել ԳՀ կառավարությանը կատարելու այդ հանցավոր քայլը՝ ես միայն կարող եմ ենթադրել:

- Դուք կարո՞ղ եք համառոտ նշել կոնկրետ գործողություններ, որոնք կարող են բեկել և փոխել երկրում գիտատեխնիկական ոլորտի վիճակը դրական ուղղությամբ:

- Ես երկար եմ մտածել այն հարցի շուրջ, թե մենք ինչով կարող ենք աշխարհին ներկայանալ, որպեսզի դիմակայեց ընթացող խիստ լարված մրցակցությունը: Իմ կարծիքով մեզ անհրաժեշտ է էական փոփոխություններ կատարել ուսումնառության ողջ տիրույթում. մակապարտեզից մինչև բուհ, ներառյալ հետբուհական ուսուցումը, որպեսզի օրսյլ չտանք, որ որևէ հայ երեխա և հատկապես օժտվածները այս կամ այն պատճառով չստանան լիարժեք կրթություն: Մեզ անհրաժեշտ է անընդիատ ստվարացնել երկրում գիտական և ինժեներատեխնոլոգիական ոլորտում ընդգրկված մտավորականության թիվը և լավացնել նրա որակները: Դա իրականացնելու համար մեզ անհրաժեշտ է Սփյուռքը իրապես ներգրավել այդ գործերում՝ ստեղծելով ցանցային Հայք՝ իր բոլոր կարողություններով: Միայն այդ դեպքում մենք կարող ենք լինել մրցունակ աշխարհի մասշտաբով: Դա թեև բարդ, բայց իմ կարծիքով միակ հնարավորությունն է: Պարփակելով պայմանական 29 740 կմ² տարածքում, ինչպես դա մեզ ներշնչում ու հրամցնում են, մենք անշոքելի կործանման ու վերացման ենք դատապարտված:

Դարկ է պայմաններ ու հնարավորություններ ստեղծել, որպեսզի մեզ մոտ ասպարեզ զան գիտնականներ, որոնք գիտության տարբեր ոլորտներում լինեն համաշխարհային առաջատարներ: Դա եղել է տարբեր դարերում, բայց իշխող դասը ցավոք տգետ և անհեռատես է եղել և ճիշտ չի գնահատել ապագա ընթացքի մեջ մտքի ուժի կարևորությունը: Դա ցավոք և առավել ուժով շարունակվում է նաև հիմա, ինչը օր առաջ պետք է կանգնեցնել, տրամազոծորեն փոխել վերաբերմունքը Մտքի հանդեպ... Առանց մեծաքանակ և հզոր գիտատեխնիկական կարողների և գիտատար տնտեսության Հայաստանը չի կարող գոյատևել այս տարածաշրջանում. դա աքսիոմատիկ ճշմարտություն է:



2025 թ. հունիսի 18-ին Բելգիայի Ղազնային խորհրդարանի Ներկայացուցիչների պալատը միաձայն ընդունել է «Լեռնային Ղարաբաղի իրավիճակի և Հարավային Կովկասում խաղաղության անհրաժեշտության վերաբերյալ» բանաձևը: Այս բանաձևն ի սկզբանե դրական կարծիք էր ստացել Բելգիայի Ղազնային խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից հունիսի 2-ին՝ միաձայն քվեարկության արդյունքում:

Բանաձևը ներկայացվել է պատգամավորներ Էլս վան Յուֆի և Միշել դը Մակոյի կողմից: Այն հիմնված է նախորդ խորհրդարանական դիրքորոշումների, ինչպես նաև եվրոպական խորհրդարանի կողմից ընդունված նմանատիպ փաստաթղթերի վրա: Ընդունված բանաձևը դատապարտում է Ադրբեյջանի ռազմական հարձակումը Լեռնային Ղարաբաղի հայության դեմ, ինչպես նաև դրան նախորդած Լաչինի միջանցքի շրջափակումը՝ ընդգծելով, որ այդ գործողությունները միջազգային իրավունքի լուրջ խախտումներ են: Այն նաև դատապարտում է Ադրբեյջանի ագրեսիվ հռետորաբանությունը Հայաստանի դեմ և վերահաստատում է աջակցությունը Հայաստանի տարածքային ամբողջականությանը:

Բանաձևը Բելգիայի Ղազնային կառավարությանը կոչ է անում՝

Աջակցել Ադրբեյջանի կողմից իրականացված հանցագործությունների միջազգային հետաքննությանը, այդ թվում՝ Հաագայի Միջազգային քրեական դատարան դիմելու միջոցով:

Խորացնել համագործակցությունը Հայաստանի հետ:

Բելգիայի խորհրդարանն ընդունել է Արցախի մասին բանաձև՝ դատապարտելով Ադրբեյջանին

Պահանջել 2023 թ. սեպտեմբերի 19-ից հետո կալանավորված բոլոր հայ ռազմագերիների անհապաղ ազատ արձակում, ապահովել նրանց հիմնարար իրավունքները և արդարադատության հասանելիությունը:

ԵՄ մակարդակով պաշտպանել նպատակային պատժամիջոցների կիրառումն այն անձանց և կազմակերպությունների նկատմամբ, ովքեր պատասխանատու են հրադարարի խախտումների, մշակութային ժառանգության ոչնչացման, մարդու իրավունքների խախտումների և Հայաստանի ինքնիշխանությանը սպառնացող գործողությունների համար:

Բանաձևը, Ադրբեյջանից հաշվետվողականություն պահանջելով, վերջինիս նաև հորդորում է.

Հետևել միջազգային պարտավորություններին և ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի պարտադիր որոշումներին:

Երաշխավորել Լեռնային Ղարաբաղի էթնիկ հայերի իրավունքները և ապահով, անխղճորոշ վերադարձը միջազգային վերահսկողության և անվտանգության երաշխիքների ներքո:

Դադարեցնել ստորիչ հռետորաբանությունն ու ձեռնպահ մնալ Հայաստանի տարածքային ամբողջականության դեմ գործողություններից:

Ներգրավվել Լեռնային Ղարաբաղի հայերի հետ թափանցիկ երկխոսության մեջ՝ նրանց անվտանգությունն ու իրավունքները երաշխավորելու նպատակով:

Թույլատրել անկախ բժշկների խմբի այց՝ կալանավորված հայերին զննելու համար:

Պաշտպանել Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային, պատմական և կրոնական ժառանգությունը և թույլատրել ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելության մուտքը տարածք՝ հուշարձանների գնահատման նպատակով:

Դուրս բերել գործերը Հայաստանի տարածքից:

Ներկայացուցիչների պալատում բանավեճի ընթացքում բազմաթիվ պատգամավորներ խորհուրդ են Հայաստանի և Ադրբեյջանի միջև խաղաղության համաձայ-



նագրի շուրջ շարունակվող բանակցությունները, սակայն չեղարկել են, որ խաղաղությունը և հաշտեցումը պետք է հիմնված լինեն միջազգային իրավունքի վրա և լինեն արդար: Էլս վան Յուֆը ազդեցիկ ելույթ է ունեցել՝ հիշեցնելով, թե ինչպես պատերազմի ընթացքում Ադրբեյջանի ագրեսիան ստիպեց ավելի քան հարյուր հազար էթնիկ հայերի տեղահանվել սեփական հայրենիքից, ինչպես ավերվեցին գյուղերը և եկեղեցիները՝ հանցավոր գործողություններ, որոնք արժանի են միջազգային դատապարտման և պատասխանատվության: Միշել դը Մակոյը նույնպես վերահաստատել է իր աջակցությունը Լեռնային Ղարաբաղի հայերին և դատապարտել նրանց նկատմամբ իրականացված «ամբողջական էթնիկ գոտումը»: Նա նաև քննադատել է Հայաստանի հանդեպ Ադրբեյջանի անհասկանալի նախապայմանները և կարևորել Ադրբեյջանին ճնշելու անհրաժեշտությունը՝ հրաժարվելու իր ագրեսիվ հռետորաբանությունից:

«Հրապարակ», 18 հունիսի, 2025 թ.

Գողթն գավառի հայկական Ցղնա գյուղը


Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Գողթն գավառի նշանավոր բնակավայրերից է Ցղնա գյուղը՝ հայտնի նաև Չանանաբ, Ծղնա, Ճալանա, Ցխնա և այլ անուններով: Ազգագրագետ Երվանդ Լալայանը գյուղը հիշատակում է նաև Չանանաբ անունով: Ղևոնդ Ալիշանը գրում է, որ գյուղի հայկական անունը Ցղնա է, «որ հարկ է թե մեծ և նշանավոր էր ի հնումն»: Ըստ տեղացիների բացատրության՝ Ցղնա անվանումը նշանակել է «ցեղն Անույ»: Գյուղը տեղացիների՝ զոկերի բարբառով կոչվել է նաև Ցուղնա, որի մասին հիշատակվում է գյուղի Սուրբ Աստվածածին վանքի՝ 17-րդ դարին վերաբերող վիմագիր արձանագրության մեջ:

Գյուղը գտնվում է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջանում՝ համանուն քաղաքից 25 կմ հյուսիս-արևմուտք: Ցղնա գետի հովտում՝ շրջապատված մրգատու ծառաստաններով:

Գյուղի շրջակայքի նյութական մշակութային տվյալները փաստում են, որ Ցղնան եղել է հնագույն բնակավայր և, հատկապես զարգացած միջնադարից սկսած, դարեր շարունակ հանդիսացել է Գողթնի աչքի ընկնող կենտրոններից մեկը: Գրող և հրապարակախոս Մեսրոպ Թադևոսյանը Ցղնայի մասին հիշատակում է. «...յաևեա աւերակ իմն մեծի քաղաքի, քան թէ գիւղ աննշան որպէս զարդիս տեսանի»:

Դարերի ընթացքում Ցղնայի հայությունը, որը հիմնականում զբաղվել է վաճառականությամբ, ենթարկվել է օտար նվաճողների արշավանքներին, ասպատակություններին, կոտորածներին՝ հաճախ ստիպված լինելով տեղահանվել հայրենի բնակավայրից: Այդ մասին հիշատակություն կա 1349 թվականին Ցղնայում գրչագրված Ավետարանի հիշատակարանում:

Գյուղի մոտ՝ Լեռնալանջին, գտնվում են «Հարսի ու Փեսի քարերը», որի մասին պահպանվել է մի գեղեցիկ ավանդազրույց: Բանահավաք Արամ Ղանա-



Ցղնայի սբ. Աստվածածին եկեղեցին

լանյանը գրում է, որ «տղա ու աղջիկ սիրահարվելով փախել են, որպեսզի ազատվեն ծնողների բռնությունից: Վերջիններս, իմանալով այդ մասին, ամիժել են, և նրանք անմիջապես քար են դարձել»:

Ցղնան եղել է միջնադարյան հայտնի գրչօջախ, որտեղ գրչագրվել են բազմաթիվ ձեռագիր մատյաններ: Մեզ հայտնի մոտ մեկ տասնյակ ձեռագրերից երկուսը պահվում են Երևանի Մատենադարանում: Ամենահին ձեռագիրը գրչագրվել է Սուրբ Աստվածածին վանքում 1349 թվականին՝ Դանիել տանուտերի օրոք, իսկ վերջինը՝ 1696 թվականին:

Գյուղում եղել են մեծակառույց Սուրբ Աստվածածին վանքը, Սուրբ Գրիգոր, Սուրբ Նշան և Սուրբ Սարգիս եկեղեցիները, ինչպես նաև մի շարք պատկերաքանդակներ, որոնց մի մասը պահպանվել են Սուրբ Աստվածածին վանքի և Սուրբ Սարգիս եկեղեցու որմերում և վերաբերում են 15-17-րդ դարերին:

Գյուղի հյուսիսարևելյան մասում է գտնվել դեռևս 12-13-րդ դարերում կառուցված Սուրբ Աստվածածին վանքը: Վերջինս 17-րդ դարի կեսերին Գողթնի և Երնջակի մի շարք հուշարձանների թվում, ըստ 17-րդ դարի հայ նշանավոր պատմիչ Առաքել Դավրիժեցու, վերանո-

րոգվել է Մովսես և Փիլիպոս կաթողիկոսների կողմից: Վանքը խորհրդային Ադրբեյջանի շրջանում ծառայել է իբրև պահեստ: Կանգուն է եղել մինչև 1980-ական թվականների վերջը: Ադրբեյջանցիների կողմից ավերվել է 2000-ական թվականներին:

Մեկ այլ եկեղեցի՝ Սուրբ Սարգիս անունով, գտնվել է գյուղի կենտրոնում: Կառուցված է եղել 13-14-րդ դարերում, վերանորոգվել է 1890 թվականին Ս. Սաղաթյանի կողմից: Նախիջևանի հայկական ճարտարապետական մյուս հուշարձանների նման այս եկեղեցին էլ ադրբեյջանցիների կողմից ավերվել է 2000-ական թվականներին:

Գյուղում է գտնվել նաև Սուրբ Գևորգ եկեղեցին, որը հիշատակվում է 1467 թվականի մի ձեռագիր մատյանում: Ներկայումս ավերակ վիճակում է:

Գողթն Կարագյոյաճի «Նախիջևանը եվրոպացի ճանապարհորդների ուղեգրություններում (XIII-XVII դդ.)» աշխատության մեջ հիշատակություն կա ճիգվիտ վանական ժակ Վիլլտի՝ 1690 թվականին դեպի Թավրիզ կատարած ճանապարհորդության մասին: Վերջինս ճանապարհին կանգ է առել Նախիջևանի Ցղնա գյուղում՝ այն հիշատակելով «բավականին մեծ մի գյուղ, որը բնակեցված է ա-

վելի քան 300 հայ ընտանիքներով» եվրոպացի ճանապարհորդը եղել է նաև Սուրբ Աստվածածին եկեղեցուն:

Ցղնայում հայտնի են եղել նաև Տամբրի թաղամասի գերեզմանատունը, Ցղնայի բերդը, կամուրջը և այլ կառույցներ: Գյուղում նշանավոր է եղել նաև հայ մեծանուն երաժշտագետ Կոմիտասի պապերի՝ Սողոմոնենց ապարանքը:

Տամբրի գերեզմանատունը հնագույն է, որտեղ եղել են 350-400 տապանաքարեր: 1940-ական թվականներին ադրբեյջանցիների կողմից տապանաքարերի մեծ մասն օգտագործվել է որպես շինանյութ:

Ցղնայում եղել են հայկական (եկեղեցական-ծխական) երկու դպրոցներ՝ բացված 1862 և 1878 թվականներին, և մեկ պետական (ռուսական) դպրոց՝ բացված 1900 թվականին:

Գյուղը մշտապես եղել է հայաբնակ, որտեղ ապրել են մի քանի հարյուր հայ ընտանիքներ: 1914 թվականի դրությամբ գյուղում ապրել են միայն հայեր: Ցղնայի տարածքում չի պահպանվել մահմեդական ոչ մի հուշարձան:

Ցղնան 1919 թվականի ամռանը ենթարկվել է թուրք-թաթարական զորքերի հարձակմանն ու ամիսներ շարունակ դիմադրել է: Սակայն 1919 թվականի վերջերին գյուղն ամբողջությամբ հայաթափվել է:

Ցղնան հայտնի է իր նշանավոր հայորդիներով, ինչպիսիք են՝ նշանավոր երաժշտագետ Արամ Մերանգուլյանը, «Արարատ» ամսագրի խմբագիր Կարապետ Եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը և այլք:

Թեև ներկայումս գյուղն ադրբեյջանաբնակ է և կոչվում է Չեննաբ, սակայն պատմական աղբյուրներն ու հնագիտական ուսումնասիրությունները փաստում են, որ Ցղնան տարածաշրջանում հայկական մշակույթի և քաղաքական կյանքի անբաժանելի մասն է:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ
10.07.2025



Ավետիք Իսահակյանը հայոց հոգևոր կենտրոնի մասին

«Առանց հայ ժողովրդի էջմիածին չկա, առանց էջմիածնի հայ ժողովուրդը չկա: Այնքան ժամանակ, որ հայ ժողովուրդը կա, էջմիածինը կա: Այնքան ժամանակ, որ էջմիածինը կա, հայ ժողովուրդը կա: Դա այդպիսի միակենտրոն երևույթ է: Շատ ենք խոսել ժամանակին, ամբողջ դարերով ու տարիներով, թե էջմիածնի դերը ինչու է, ինչ մեծ դեր է կատարել:»

...Իբրև ժողովրդի մեկ մասնիկը, ժողովուրդ, որն անվանվում է «էջմիածնա ազգ», մենք էլ՝ այդ ազգի որդիները, միշտ էլ պիտի կապված լինենք նրա հետ և պահենք ու պահպանենք նրան, որովհետև մեր ազգության գոյությունը ամենաուժեղ կերպով, կայուն և տևական կերպով, նա է պաշտպանել...»:

Մեր հոյակապ հին վանքերի մութ խուցերում, մենության մեջ Պատմիչները մեր վշտահար, մեղմ կանթերի լույսով անշեք, Սի մշխարով, մի կուն ջրով և ճգնությանմբ գիշերն անքուն, Պատմությունը մեր գրեցին մագաղաթի վրա դժգույն...:

Մտքեր, որոնք այսօր էլ խորհելու տեղիք են տալիս

Ամեն մի հայ, առանձին վերցրած, առյուծ է, ինչպես և խելքով ու դատողությամբ՝ հսկա: Բայց ընկերական ոգու բացակայությունը խմբովին գործելիս ջլատում է նրա ուժերը: Ձգեցեք մեմակ հային վտանգների փոթորկի մեջ, նա արժանավորապես կպաշտպանի յուր գլուխը: Բայց խմբեցեք մի քանի հայեր միասին, և նրանք պաշտպանվելու կան հարձակվելու փոխարեն կսկսեն խորհել, մտածել, հակաճառել և, վերջապես, թշնամուն թողած, միմյանց միմյան ուտել: Այո, անհատականությունը հայի գլխավոր թշնամին է, և նա տարածված է մեր բոլոր դասակարգերի և բոլոր գործերի մեջ:

Րաֆֆի

Կոմիտասի հոգեշեղման պատճառով ամենակին էլ ցեղասպանությանը ակնառաջ լինելը չէր, այլ այն, որ Արամյայի հայերին մորթազերծ էին անում, իսկ Պոլսի հայերը դեռ շարունակում էին սրճարաններում վայելել իրենց թեյը՝ կարծելով, թե իրենց ոչինչ չի լինի:

Եղիշե Չարենց

Երբ վախկոտները դառնում են հերոսներ, իսկ հերոսները մոռացվում են, այդ ժամանակ աշխարհում տիրում է անբարոյականությունը: Մի՛ հերոսացրեք նրան, ով անգամ չգիտի՝ ինչ է հայրենիքը:

Սողոմոն Թեհլիրյան

Հայաստանում երկու սերունդ է աճում կողք կողքի. մեկը՝ ազգամերժ, լեզունդին, ամիդեալ, ծուլվող ազգուրաց, մայրենի լեզուն արհամարհող, կարիերիստ, մյուս սերունդը՝ թանձր, թունդ հայրենասեր, հայկական օջախներին կառչած, գրաբարյան:

Մի օր այս սերունդները՝ հայերը և այլասերվածները, իրար փոր պիտի թափեն:

Ավետիք Իսահակյան

Մի ժողովուրդ, որն իրեն պետք եղած ուժն իրենից դուրս է փնտրում, կուրորեն իր պարտությունն ու անկումն է նախապատրաստում:

Թուրքերը Հայկական հարցում երբեք էլ չեն փոխվի, քաղաքակրթվի. նրանք մնում են նույնը, և նրանց հետ լեզու գտնելու քարոզչությունը վնասակար է, իսկ հաշտությունը՝ աղետաբեր...

Գարեգին Նժդեհ

Մեր հայտնի և անհայտ հայրենակիցները. Հայկ Մանուկյան

Վերջերս ամերիկյան թոք-շոունեից մեկի ժամանակ աստվածացնում էին Սիցիլիայի Պալերմոյից երբևէ ԱՄՆ գաղթած Շառլի որդուն՝ Հովիվուդի ամենահեղինակավոր իտալացի, օսկարակիր ռեժիսոր Մարտին Սկորսեզեին: Մարտինը, ինչ խոսք, համճարեղ ռեժիսոր է:

Ողջ հաղորդման ընթացքում ոչ մի խոսք չասվեց իտալացի էմիգրանտների որդի երիտասարդ Մարտինի առաջին քայլերի մասին 1950-ականների վերջին, սակայն կար ժամանակ, երբ Մարտինն այդ մասին խոսում էր ամեն մոր մրցանակ ստանալիս...

1942 թ.-ին Նյու Յորքում ծնված, ասթմայով ի ծնե տառապող Մարտինին վիճակված էր դառնալ Հովիվուդի լեգենդ բոլոր ժամանակների լավագույն ռեժիսորների ցուցակում: 1960 թ.-ին՝ զինվորական ծառայությունից հետո, Սկորսեզեն ընդունվեց Նյու Յորքի համալսարանի կինոյի բաժին, որտեղ դասախոսում էր կինեմատոգրաֆիայի պրոֆեսոր Հայկ Մանուկյանը:

Այնթափցի փախստականների որդի Հայկը Հովիվուդի հայտնի ռեժիսորների մի ամբողջ սերունդ դաստիարակեց:

Արդեն հաջողությունների հասած ու համաշխարհային հռչակ ու-

նեցող Սկորսեզեն 2006 թ.-ին «Ուրացողները» ֆիլմի համար, որտեղ փայլեցին երեք համճարեղ դերասաններ՝ Ջեք Նիքոլսոն, Մեթ Դեյմոն ու Լեոնարդո դի Կապրիո, Օսկար ստանալիս հոլիվուդյան բեմից խոստովանեց, որ ինքն ընդամենը Մարտինն է՝ իտալացի էմիգրանտների աղքատ և հիվանդ որդին, իսկ Սկորսեզեն իրեն դարձրել է Հովիվուդի լեգենդ պրոֆեսոր Հայկ Մանուկյանը:

«Նա չէր դասավանդում, նա քարոզում էր. նա չէր սովորեցնում, նա դաստիարակում էր», - Հայկ Մանուկյանի մասին ասում էր Մարտին Սկորսեզեն:

Հայ պրոֆեսորի և ուսուցչի դեկավարությամբ Սկորսեզեն նկարահանեց իր առաջին երկու կարճամետրաժները: Առաջին լիամետրաժը՝ «Ես առաջինը կգանգեմ» ֆիլմը, Մարտինը նկարահանեց 1967թ.-ին. ֆիլմի պրոդյուսեր դարձավ Հայկ Մանուկյանը: Նա Մարտինին բարձրացրեց հոլիվուդյան փառքի աստիճաններով:

«Նա մեզ քանդում էր և նորից հավաքում. երբ ընկնում էինք, չէր բարձրացնում, ասում էր՝ ինքներդ վեր կացեք, ես միշտ ձեր կողքին չեմ լինելու»:

1978 թ.-ին Սկորսեզեն նկարահանեց «Կատաղած ցուլ» ֆիլմը՝ լե-




գենդար բռնցքամարտիկի մասին, որին մարմնավորեց համճարեղ Ռոբերտ դե Նիրոն:

Ֆիլմը միանգամից ութ անվանակարգում հավակնում էր Օսկարի: Ֆիլմի սկզբում առաջին տողերը, որ հայտնվեցին էկրանին, Սուրբ զորքից էին. «Ժամանակին ես կույր էի, բայց հիմա աչքերս բացվեցին. ի հիշատակ պրոֆեսոր Հայկ Մանուկյանի»: Լեգենդար ուսուցիչը մահացավ 1980-ի մայիսի 26-ին՝ «Կատաղած ցուլ»-ի պրեմիերայից մի քանի օր առաջ: Հիմա Հովիվուդում աստվածացնում են նրա ուսանողներին, իսկ Հայկ Մանուկյանի մասին մուլ-միսկ հայերը չեն լսել...

Էդուարդ ՄԱՆՎԵԼՅԱՆ

Էռնեստ Ընֆինգուել



Ամերիկյան գրականության ակադեմիայի անդամ, Նյու Յորքի Միլլեր Դեմինգուելյին 1954 թ. շնորհվել է Նոբելյան մրցանակ նրա ամենահայտնի ստեղծագործության՝ «Ծերունին և ծովը» վիպակի համար: Ստորև ընթերցողին ենք ներկայացնում նրա ուշագրավ մտքերից:

Աշխարհը բոլորին է կոտրում, ու դրանից հետո շատերն էլ ավելի են ամրանում: Բայց աշխարհը սպանում է նաև նրանց, ովքեր չեն կոտրվում: Աշխարհն առանց խտրականության սպանում է ամենալավներին, ամենազնիվներին ու ամենաքաջներին: Իսկ եթե դու ոչ մեկն ես, ոչ էլ մյուսը, կարող ես վատախ լինել, որ, միևնույնն է, քեզ էլ կսպանի, միայն թե առանց ավելորդ շտապողականության:

Անհանգստությամբ երբեք ոչինչ չես շտկի:

Տեղից տեղ մեկնելով՝ չես կարող փախչել ինքդ քեզ-նից:



Մեծ նկարչի դասը

Ռեստորանում ճաշելիս հիսունամյա Պաբլո Պիկասոյին մոտեցավ մի այցելու և խնդրեց լեգենդին տեղում իր համար ինչ-որ բան նկարի: Պիկասոն վերցրեց մատիտն ու ամենուրեքից, 10 րոպեում նկարեց քաղաքային մի հիմնալի տեսարան և տվեց այցելուին:

-Խնդրեմ, 10.000 դոլար արժե:

-Այդ ինչպե՞ս, - զարմացավ կինը, - Դուք դրա վրա ծախսեցիք ընդամենը 10 րոպե:

-Միայնվում եք, տիկին, - հարգանքով պատասխանեց նկարիչը, -ես դրա վրա ծախսել եմ 50 տարի և 10 րոպե...

Այս պատմությունն արժեքի մասին է և այն վարպետության, որն ընկալվում է որպես հեշտություն: Երբեք չթերագնահատեք դիմացինի աշխատանքը: Որքան արագ և որակյալ է կատարվում այն, այնքան ջանք ու տարիների ներդրում կա այդ վարպետության մեջ:

Խելացի մարդկանց շրջանում երջանկությունը հազվագյուտ երևույթ է:

Իբրև գրող՝ դու չպետք է դատես, այլ պետք է հասկանաս:

Կա միայն այսօրը և ուրիշ ոչինչ: Չկա ո՛չ երեկ, ո՛չ վաղը: Քանի՞ տարեկան պետք է դառնաս, որպեսզի իմանաս դա: Կա միայն ներկան, և եթե ներկան ընդամենը երկու օր է, ապա այդ երկու օրը քո ողջ կյանքն է, և դրանում ամեն ինչ չափի մեջ կլինի: Ահա թե ինչպես են ապրում մի ողջ կյանք երկու օրում: Եթե դադարես բողբոջ ու պահանջել այնպիսի բաներ, որոնք երբևէ չես ստանալու, դու լավ կյանք կունենաս: Ժամանակը չէ մտածել այն ամենի մասին, որոնք չունես, ավելի լավ է մտածիր, թե ինչ կարող ես անել ձեռքիդ տակ եղածով:

Պատերազմը, որքան էլ որ այն անհրաժեշտ ու արդարացի լինի, միշտ էլ հանցագործություն է:

Երբեք մի՛ ճանապարհորդեք նրանց հետ, ում չեք սիրում:

Մարդկանց մեծ մասը երբեք չի լսում միմյանց:

Տարիքի հետ մարդիկ խելացի չեն դառնում: Նրանք պարզապես ավելի զգույշ են դառնում:

Նա, ով պարծենում է իր գիտնական լինելով կամ զարգացածությամբ, ո՛չ գիտնական է, ո՛չ էլ զարգացած:

Մենք բոլորս կոտրված ենք: Եվ հենց կոտրված տեղերում էլ հաճախ ամենաուժեղն ենք:

Հաջողության գաղտնիքը շատ պարզ է: Երբեք չկոտրվեք: Երբեք չկոտրվեք մարդկանց ներկայությամբ:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24/4,
հեռ. 58-18-23, 3-16

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝
448:

Ստորագրված է տպագրության՝
28.07.2025 թ.:

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: